

**ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՅՍՕՐ
ՀԱՄԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

Հրատարակութիւն՝

Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	<u>ԷԶ</u>
1.- Սփիւռքը երեկ եւ այսօր - ինքնութեան հարցադրումներ - ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԻՐԸՃԵԱՆ	3
2.- Սփիւռքի նոր օրակարգը Ինքնութեան, յանձնառութեան ու զօրաշարժի մարտահրաւերները համաշխարհայնացման ոլորտին մէջ - ԽԱՉԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ	23
3.- Մշակում հայերէնի լեզուամշակութային քաղաքականութեան որպէս հայուրթիւնը միաւորող կարեւոր ազդակ - ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆ	51



Նախաբան

Նոյեմբեր 2004ին Պեյրուֆի մէջ տեղի ունեցաւ խորհրդածողով մը, որուն կը մասնակցէին Հ.Օ.Մ.ի, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Համազգայինի մեծաթիւ՝ Հայաստանէն եւ Սփիւռքէն ժամանած նարկայացուցչներ: Խորհրդրդածողովի արծարծած խնդիրը այլազան ըլլալով հանդերձ, անոնք առաւելաբար քննութեան տակ կ'առնէին ներկայի հայութեան հրատապ հարցերը:

Ներկայացուած զեկուցումները կ'անդրադառնային մանաւանդ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն. անոնց հոլովոյթը վերջին երկու տասնամեակներու ընթացքին, զանոնք առողջ կերպով զարգացնելու անհրաժեշտութիւնը, Սփիւռքի գաղութներու եւ Հայաստանի՝ հայութեան բոլոր մասնիկներու թէկուզ դանդաղ, բայց միաժամանակ հաստատ համարկման հասնելու հեռանկարով:

Ներկայ գրքոյկով կը ներկայացնենք այդ խորհրդածողովէն երեք ներկայացուցչական զեկուցումներ: Բնական է, այդ զեկուցումներուն մէջ արտայատուած միտքերը կը պատկանին իրենց հեղինակներուն. անոնց անհատական համոզումներն են, թէեւ այդ կարծիքներէն շատերը արդէն հասարակութեան լայն խաւերուն կողմէ ընդունուած իրականութիւններ են: Վստահաբար կան նաեւ վիճելի հարցեր, որոնք ժամանակի ընթացքին հարկ է քիւրեղացնել, որպէսզի պատմական ներկայ հանգրուանին մեր հաւաքականութիւնը գտնէ իր ճիշդ ուղին: Վիճելի այդ հարցերը կ'արժէ ենթարկել նաեւ հանրային քննութեան՝ գրաւոր ու բանաւոր երկխօսութեան ճամբով: Ահա այս է համեստ այս հրատարակութեան անմիջական նպատակը:

Սփիւռքը երեկ եւ այսօր - ինքնութեան հարցադրումներ

Յարութիւն Զիրքճեան

Յաճախ վերջերս, ու մասաւանդ՝ հայրենիքի վերանկախացումէն ի վեր, կը խօսուի Սփիւռքի ինքնութեան մասին, ապա նաեւ՝ անոր տագնապներուն մասին - տագնապ ինքնութեան, նպատակադրումներու...:

Այդպիսի հարց մը համակողմանիօրէն «պաշարելու» համար, ըմբռնելու համար, հարկ է հարցադրել նախ՝ այդ Սփիւռքին ինքնութիւնը, այնպէս՝ ինչպէս անիկա պատկերացուած է ցարդ, ու կը պատկերացուի այսօր: Նաեւ քննել գուգահեռաբար ծագող յարակից հարցեր ու հարցումներ.-

1. Նո՞ր է «Սփիւռքի տագնապը», անոր ինքնութեան հարցադրումը...: Սփիւռքի մէջ, 1930ական, 40ական, 50ական, 60ական տարիներուն, եղա՞ծ է տագնապի մտածում, ինքնութեան հարցադրում... Չէ՞ եղած...:

2. Սեփական ինքնութեան ինչպիսի՞ պատկերացումներ գոյացած են, եւ ո՞ւր. մտածումի ինչպիսի՞ գործօններու մօտ - անհատներո՞ւ, կազմակերպուած խումբերո՞ւ...: Որքանո՞վ՝ իբր ինքնագիտակից մտածում, որքանո՞վ՝ իբր լոյծ-անորոշ, բայց ամէն տեղ թափանցող մտայնութիւն, կէս-անգիտակից գաղափարաբանութիւն:

3. Այդ պատկերացում-մտածումները, այսօր, կէս կամ երեք-քառորդ դարու հեռաւորութենէ դիտուած, որքանո՞վ համապատասխան կ'երեւին Սփիւռքի առարկայական իրականութեան. այդ իրականութեան ամբողջութեանը...: Օրինակ՝ եթէ, քաղաքական կազմակերպութիւններու բանաձեւերուն ու գաղթական մնացորդացի մը խոր կարօտներուն մէջ, Սփիւռքը սահմանուեր է իբր *արմատախիլ ժողովուրդի ժամանակաւոր կայք*, այդ ժողովուրդը ո՞ր

չափով, որքա՞ն ատեն ապրեր է արմատախիլի կենցաղով եւ հոգեբանութեամբ. արդէն ի՞նչ էին առարկայական կարելիութիւնները՝ որ ան այդ ձեւ ապրեր, շարունակէր ապրիլ: Եւ եթէ այդ Սփիւռքը սահմանուեր է իբր զէնք, իբր միջոց՝ հայրենիք կերտելու, պետք չէ՞ր անիկա կազմակերպուէր, աճող սերունդ պատրաստէր, նիւթապէս եւ հոգեպէս դառնար պայքարի զօրաւոր յենարան: Եւ ապա, այդպէս զօրացած, այդ կառոյցները պետք էր իրենք զիրե՞նք ջնջէին՝ հայրենադարձի մէջ...: Ի՞նչ ձեւերով կարելի էր այդ նպատակը դարձնել ամօրեայ ապրում ու հրամայական - յատկապէ՛ս կազմակերպուած փոքրամասնութենէ մը անդին՝ մեծ զանգուածին համար, տարուած՝ իր ֆիզիքական վերապրումի ու տեղական ընկերութիւններու մէջ տնտեսական համարկումի ճիգերով: Եւ ի՞նչ չափով կատարուած էր այդ աշխատանքը...:

Կ'արժէ անելի պարզաբանել-բանալ վերջին այս հարցադրումը: Երբ կը խօսուի Սփիւռքի ինքնութեան մասին՝ տրամաբանելով իբր քաղաքականօրէն կազմակերպեալ փոքրամասնութիւն, սահմանումներ կամ գնահատումներ անշուշտ կը վերաբերին նախ եւ առաջ կուսակցութեան, անոր աշխարհայեացքին, ռազմավարութեան - անոր շարքերուն: Իսկ ի՞նչ կը պատահի զանգուածին հետ. կուսակցութիւն մը ունի՞ր պարտաւորութիւնը, զանգուածին դիմած ատեն, պատշաճեցնելու յանձնառու շարքերու սահմանուած իր պատկերացումները - տրամաբանական, բարոյական թէ ռազմա-մարտավարական իմաստներով, թէ՞ ոչ...: Ու այս երկընտրանքը ինչպէ՞ս կը ներկայանայ յատկապէս՝ սփիւռքեան բարդ ու խառն իրադրութեան մէջ:

Զմոռնանք, որ հոս հպանցուած հարցը կ'ածանցուի ընդհանրական այն հարցին, որ ամենասուր կերպով միշտ դրուեր է տարասփիւռ ժողովուրդի մը առաջատար կազմակերպութեան.- իբր կուսակցութիւն՝ ըլլալ գործօն փոքրամասնութի՞ւն, թէ՞ տարածուիլ, «ազգին հոգերը շալկել» իրենց այլատարրութեան մէջ...

* * *

Տրամաբանական է մտածել, որ Սփիւռքի հոլովոյթին այս կամ այն չափով հետեւած են, զայն մտածած են անոր մէջ արմատ ձգած քաղաքական կազմակերպութիւնները: Յամենայն դեպս, Յ. Յ. Դաշնակցութեան պաշտօնական բանաձեւումները՝ Ընդհանուր ժողովներու «Որոշումներ»ը, պարզ է, մեզի կը բերեն անդրադարձում մը՝ Սփիւռք-իրողութեան յաջորդական տասնամեակներու ինքնապատկերացումէն. ու սկիզբէն՝ հոն կը նկատենք նշանները քիչ առաջ մատնանշուած սփիւռքեան երկուութեան:

Այսպէս, 10րդ Ընդհ. ժողովի (1924-25) «Որոշումներ»ը «գաղութներ» բառին կը կցեն «առժամեայ» որակումը, բայց միւս կողմէ զգացնելով կազմակերպական ամրացումի, արմատաւորման յստակ ձգտումներ, ինչպէս՝ «Յայ գանգուածները» ըլլան «տնտեսապէս բարգաւաճ»... «ամրացուին ազգային-վարչական ինքնավար օրգանները, ... զօրացուի դպրոցական ցանցը», կազմուին «արհեստակցական-գործակցական միութիւններ», եւ ընդունուի «հիրընկալ պետութիւններու հպատակութիւնը»:

* * *

Հիմնական այդ երկուութիւնները, զանազան նոր ձեւաւորումներով, մէկ կամ միւս կողմի շեշտումով, կը վերագտնուին հետեւող տասնամեակներուն: Բայց նախքան այդ՝ կ'արժէ, կազմակերպական փաստաթուղթերէ անդին, տեսնել կեանքի իրականութիւնը, ճի'շդ այն՝ զոր կազմակերպական գործը կը ձգտի յեղափոխել. բայց որ պէտք է դիտուի ու քննուի այնպէս՝ ինչպէս կայ: Ու կը դիմեմ անհատական վկայութիւններու՝ մտածող անհատներու՝ պատկերացումին - անշուշտ անելի անմիջական ու անպաշտօն, նուազ կամապաշտ՝ քան ժողովական-բանաձեւային պատկերացումը: Ամուլ հակադրում առաջացնելու փոյթ զերծ ըլլալով՝ ընտրած եմ դաշնակցական գաղափարական ծիրին մէջ կամ շատ մօտ աճած անհատներ:

1. «Ո՞վ են այս թխադեմ մարդիկը, որ յուլաբար կեցած ինքնաշարժներուն քով՝ կը ծխեն,- Հայեր... Վաղը պիտի չաշխատի՞ն միթե... Ո՞վ են այս երեք երիտասարդ տղաքը, որ կը բարձրանան ծեքծեքուն: Սափրիչին ունելին աշխատած է իրենց գլուխներուն վրայ անշուշտ: Ինչպէ՞ս լաւ հագուած են: Ո՞վ են - Հայեր... Բայց ո՞ր կ'երթան գիշերուան այս ժամուն... Կը քալեն դանդաղօրէն, բայց աղմկելէն: Կը կենան լուսաւոր ու լայնաբաց դրան մը առջեւ: Լոյսին մէջ՝ գունատ են ու խոնջ...

«Գետնափոր սրահին մէջ, լպրծուն շարժումներով ճագ նուագող տղաքը, որ յայտնի չէ թէ ինչ ազգութեան կը պատկանին, որ գուցէ չեն պատկանիր որեւէ ազգութեան՝ մերթ ընդ մերթ լիրբ աղաղակներ կ'արձակեն... Ճագը կը վերսկսի: Յայրատ ու տգեղ կրաբ մը՝ արաբ պարուհիի մը հետ դեմ դիմաց կը պարեն: Օղը շնչատ է միշտ: Կարծես թէ հիւանդ ենք բոլորս...

«Դեմը, բեմին քով, ուրիշ խումբ մը կայ կրկին երիտասարդ հայերու: Ընտանի դէմքեր են, լուսաւոր-չական Հայու համակրելի, գրեթէ սեւ դէմքեր...

«Ինչպէ՞ս կը պատահի, որ բազմութեան մէջ նայուածքդ անընդհատ կանգ կ'առնէ իրենց վրայ: Հագուած են միւսներուն նման, նոյնքան լաւ. սափրուած են լաւ: Բայց հազար հոգիի մէջ սիրտդ կը զգայ որ Հայ են: Անշուշտ արեան ձայնն է ատիկա, որովհետեւ բոլորս նոյն արիւնը կը կրենք, Rue Lafayetteի courtierներէն սկսեալ մինչեւ Citroenի բանուորները: Հայոց ժողովուրդն է ատիկա՝ այս քաղաքին ցաւերուն, աշխատութեան ու շուայտութեան մէջ, որ ինքզինքը կը ճանչնայ, որ ինքզինքը կ'ատէ՝ խուլ ու թաքուն ատելութեամբ մը...

«Կու գան գաւառներէն, պահած տակաւին լուսաւորչական Հայու անուշ միւռոնը, որ յետոյ պիտի կորսնցնեն...»

Գրութեան թուական՝ 1929: Վայր՝ Փարիզ: Ստորագրող՝ Վազգէն Շուշանեան

2. «Ինքնախաբեութիւն պիտի ըլլար ժխտել կամ պարտկել,- տարիներու պանդխտութիւնը իր աները ցանց ու կը ցանէ տեւականօրէն: Երբեմն յամընթաց եւ անզգալի, բայց յաճախ տեսանելի ու շօշափելի...»

«Յետեւեցէք հայկական հանդէսներուն, եւ դժուար թէ կարենաք զսպել ձեր զարմանքն ու վրդովումը, համեմատելով ուրիշ տարիներու հետ:

«Նահանջականութեան ստուերը կը յածի մինչեւ անգամ քաղաքական-կուսակցական շարժումներու վերեւ, դարձեալ բաղդատելով ուրիշ տարիներու հետ:

«Ինչո՞ւ այսքան արագ դեղնեցան տրամադրութիւնները... Պատճառներու մասին կարելի է խօսիլ ամէն օր եւ օրուան բոլոր ժամերուն. ընդհանուր յուսաբեկութիւն, հացի խնդիր, բացակայութիւն որեւէ անտաքեր հեռանկարի, օտարութիւն եւ անտիրութիւն...»

«Եւ ինչո՞ւ, ամէնէն առաջ, վիատ եւ նկուն տրամադրութիւն մը պիտի մատնէին անոնք, որ կոչուած են վառ պահելու կրակը, մէկ սերունդէն միւսը - կրակը՝ հաւատքի, կամեցողութեան եւ անդու պայքարի...»

Գրութեան թուական՝ 1936: Վայր՝ Փարիզ: Ստորագրող՝ Շաւարշ Միսաքեան

3. «Հաւաքական տագնապները ապրում են մեր մօտ: Մեր առօրեայ մաշումն իսկ՝ ապրում է մեզի համար: Կը սպառինք՝ ապրելով... Ու տարբեր չէ այսօր ալ, մեր կեանքի վկայութիւնը, Սփիւռքի բոլոր աստղերուն տակ: Կը շարունակենք ապրիլ՝ որովհետեւ օրէ օր քիչ մը անելի կը զգանք թէ կը խրինք... Կեանքը կ'ընկճէ մեզ. կը սպառէ մեզ. կը քամէ մեր արիւնը: Բայց մենք կը փոխարինենք դանդաղ այդ մահը՝ անդնդային ու խոր տենչովը ապրելու...»

«Օրերը կը շարունակեն մնալ տխուր... Կեանքը մեր յաւիտենական միամտութեան, մաքուր ապրելու երազին վրայ մղձաւանջ մըն է... Ինչպէ՞ս շարժել այս բազմութիւնները՝ իրենց կրաւորականութենէն, նահանջականութենէն՝ դէպի գիտակցութեան ու զարթնումի նոր թափ մը... Այսօր մեր այս անտարբերութիւնը անելի կ'արժէ, քան ֆիզիքական բնաջնջումը...»

Քիչեր միայն կ'անդրադառնան այս խաղաղ անեացումին, այս ապահով կորստեան... Ռ՞վ պիտի իջնէ մեր իրականութեան կատարներէն, խորասուզուի քովընտի փողոցներուն մէջ... Անհրաժեշտ է ետդարձ մը՝ դէպի ակունքը ցեղին, դէպի հին վաստակ, հին սարք, հին խոնարհութիւն, հին «տգիտութիւն», դէպի «գիւղի ու գաւառի կենցաղ - եթէ այս բաները կրնան պարփակել մեր կոյս պատուախնդրութիւնը, արժանապատուութեան առողջ բնագոյր, բարոյական մեծութիւնը...

«Մեր նոր սերունդները կը դեղնին ներկայ քաղաքակրթութեան փարթամ լոյսին տակ: Այսքան ընդհանրական գիտութիւն չա՛տ է մեզի. այսքան զարգացում թո՛յն է մեր արիւնին... Մեր հայութիւնը մեր միածալ բայց կենսայորդ ուղեղին մէջ է, մեր բնագոյական իմաստութեան... Ձուլումի, այլասերումի վտանգը կը սկսի գիտութեան յափրանքէն... Այսքան կիրք ուսման, ընդհանուր զարգացումի՝ նիւթապաշտութեան ու վաշխառու ցանկութեանց գոգը կը նետեն մեզ... Պերճանք են լիկեռներու եւ համալսարաններու վկայականները...»:

Գրութեան թուական՝ 1948: Վայր՝ Դալէպ: Ստորագրող՝ Միւսա Թէօլթէան:

ա- Երեք գրութիւններուն մէջ ալ՝ յանձնառու մարդու կամապաշտութիւնը կը բախի ընկճող իրականութեան մը.- Բարոյալքումի ընդհանուր վիճակ, բարոյական անկումի՝ եւ հիւանդագին մղումներու վիճակ, հոգե-բարոյական անկում (այս մէկը ախտաճանաչուած Մ. Թէօլթէանի կողմէ՝ այս անգամ Արեւելքի՝ մէջ, երեւութական հայապահպանումի երբեմն խաբող քօղին տակ):

բ- Զիչ մը աւելի խորանալով, կ'անցնինք այս երեք գրութիւններու՝ իսկ քննադատութեան: Երեք մէջբերումներն ալ հաւասարապէս հայութիւնը կ'արժեւորեն անցեալ վայրի եւ ժամանակի արժեչափերով: Անցեալի այդ արժեչափերը բնագոյային հայութեան մը արժեչափերն են եւ գործ չունին գիտակցական տիպի հայութեան մը հետ: Մ. Թէօլթէան նոյնիսկ «գիտակցութիւն» եզրը կը

գործածել լրի՛ւ հակադիր՝ բնագոյ նշող իմաստով մը, մինչ գիտակցութեան բնականոն իմաստը, «գարգացում»ին հետ միատեղ, իր ժխտական գնահատման կ'արժանանայ: Իրենց մօտ կը բացակայի՝ հայութեան հաշուին՝ նոր արժեքներու ստեղծման նուազագոյն անջրպետը, «սեփական»ի եւ «օտար»ի հանդիպման նուազագոյն լուսանցքը... Օտարութիւնը «վտանգ» է միայն, «տգեղութիւն»...: Թէեւ արդար ըլլալու համար հարկ է նշել, որ հոս բացասական ու տժգոյն երեւցող Վ. Շուշանեանը, կամ Շ. Միսաքեանը, պարբերաբար տեղ տուած են կուռ, դրական, հեռանկարային մտածողութեան...

* * *

Այս բոլորին մէջ, մոռցած չեղանք սկզբնական հարցադրումը՝ Սփիւռքի ինքնութեան եւ տագնապի մասին: Ահա համադրական ամփոփում մը մեր ցարդ տեսած փաստերէն.-

- քաղաքական առաջատար կազմակերպութեան մը համար, Սփիւռքը ցեղասպանական Ռճիրի հետեւանք է, ու պարտի, իբր պայքարի գործիք, մնալ առկախ՝ «ժամանակաւոր»ի հակասութեան մէջ - հակառակ ամուր ու վերջնական երեւոյթի մը: Եւ պետք է դեռ աւելցնել.- Այս բոլորը պարտի ըլլալ ոչ միայն իբր քաղաքական կազմակերպուած փոքրամասնութիւն, այլ ջանալ ըլլալ նաե՛ւ իբր ժողովուրդ-զանգուած...

- սակայն աւելի ընդհանուր՝ մեր առջեւ ունինք սփիւռքեան *իրողական կացութիւն* մը, որ կ'ենթադրէ *ինքնութիւն*, նաեւ *ինքնութեան տագնապի կարելիութիւն*: Այդ կացութեան բաղկացուցիչ տարրերն են, նախ՝ տեսանք՝ նշուած Ցեղասպանական Ռճիրը, Սփիւռքի բռնադատեալ կարգավիճակը եւ տունդարձի ու բնականոն ազգ-հայրենիքի մը ստեղծման ձգտումը. բայց նաեւ՝ այդ ձգտումի անմիջական անիրագործելիութիւնը. իրերայաջորդ սերունդներով քաւարան ապրելու անկարելիութիւնը, ընկերա-տնտեսական, նաեւ մշակութային շարու-

նակուող համարկումի անխուսափելի մղումը: Այս կացութիւնը աւելի եւս պիտի բարդանայ Հայրենիքի փրկուած բեկորին առջեւ 1920ական տարիներէն աստիճանաբար իջնող *երկաթ վարագոյրով*. Խորհրդային իշխանութեան փորձերով՝ թափանցելու Սփիւռք. ապա՝ 1946-47ի *հայրենադարձով*՝ ու անոր հետեւանքներով...

* * *

Ըսուեցաւ, որ երկուութիւնը կը պահպանուի յետագայ տասնամեակներուն: 1933ի եւ 1938ի Ընդհանուր ժողովները կը յանձնարարեն կազմակերպութեան, որ *«հետապնդէ համագաղութային մարմնի մը ստեղծումը...»*. բայց, կարծես հակադարձ շարժումով մը, կը շեշտուի կարեւորութիւնը՝ մէկ կողմէ *«միշտ ի մտի ունենալու, որ Հ.Յ.Դ.ը գերազանցօրէն պետք է զբաղի կուսակցական-յեղափոխական եւ քաղաքական աշխատանքներով, միայն իր յաւելեալ ուժերը տրամադրելով ազգային-մշակութային գործերու...»*. եւ միւս կողմէ՝ *«հակազդէ գաղութներու մեկուսացման ձգտումին... պայքարի ապագայնացման եւ այլասերման վտանգին դէմ...»*:

Քառորդ դարու հասկնալի ուստում մը գործելով, կը տեսնենք ապա, որ 1963ի, ապա 1972ի համապատասխան վաւերաթուղթերը կը շեշտեն.- *«Տարասփիւռ հայութիւնը անբաժանելի մէկ մասն է հայ ազգի եւ իրաւատերը Հայ Դատի, նոյնքան՝ որքան հայրենաբնակ հայութիւնը»*. աւելցնելու համար, որ Սփիւռքի տարածքին կենսական է *«բարոյական եւ մշակութային դիմագծի, բայց մանաւանդ հանրային կազմակերպ կեանքի հիմ ու խարխիս կազմող թեմական կեանքի անխաթար պահպանումը»*: Նաեւ՝ որ - խօսելով հայրենադարձի հեռանկարներու մասին- *«հայ ժողովուրդի մէկտեղումը պետք է տեղի ունենայ քայքայելու համար սփիւռքի կազմակերպուած եւ ամուր կանգնած գաղութները»*... Որ *«ներգադրժը քաջալերելի է այն շրջաններէն, ուր հայ ժողովուրդը ուժացման եւ այլ վտանգներու տակ է»*:
Վերը իբր *«գաղութներու մեկուսացման ձգտում»*

նշուած երեւոյթի մէկ նոր մատնանշումը, 1978ին, մեզ կը դնէ «տեղայնացման շատ ծանր հետեւանքներով լի մտայնութեան մը աստիճանական արմատաւորումին առջեւ... քիչ մը ամէնուրեք», հետեւանք՝ «գաղութներու ցրուածութեան, հեռաւորութեանց, պայմաններու մեծ տարբերութեանց»: Կը հետեւի յիշեցումը, թէ՛ «Սփիւռքի բոլոր գաղութներն ալ մէկ եւ միեւնոյն ազգին համար բաբախող գործօն միաւորներ պէտք է ըլլան» - միշտ՝ «համահայկական ձգտումներու սպասարկու»:

Աւելի ուշ (1981), համադրութեան յաջորդական փորձերով, կ'ընդգծուի, որ «Սփիւռքը ինքնանպատակ չըլլալով հանդերձ, անժամանցելի հրամայականներ են հայ գաղթօճախներու կազմակերպումն ու զօրացումը՝ քաղաքական, յարաբերական, մշակութային, ընկերային թէ տնտեսական մարզերուն մէջ»... Ու հաւանօրէն ոչ-ինքնանպատակութեան նախազգուշացումը անբաւարար գտնելով, փաստաթուղթը կ'աւելցնէ, որ հայուն «բնակած երկիրները, ազգային-հասարակական եւ կրթական-մշակութային կեանքի կազմակերպման կայաններ ըլլալով հանդերձ, մեր ազատագրական պայքարի ճամբուն վրայ հանգրուաններ են միայն...»: Ապա (1985)՝ կը շեշտուի նաեւ կարեւորութիւնը իբր ուրոյն մշակոյթի տէր փոքրամասնութիւն դրսեւորուելու, սակայն ուժգնօրէն շեշտելով, որ «մշակութային ինքնուրոյնութեան գծով տարուած պայքարը պիտի չըլլայ ինքնանպատակ, այլ պէտք է տանի քաղաքականացման»:

Կազմակերպութիւն մը ունի իր հրամայականը՝ կամապաշտօրէն ձեւաւորել զանգուածը, մարմնացնել-յստակացնել անոր անկերպարան ձգտումները, անկարելին դարձնել կարելի - մինչեւ տեղ մը: Նոյնիսկ տուեալ համայնքը կեանքէն ու ներկայէն օտարելու գնով, զայն ան-ժամանակ դարձնելու գնով: Յամենայն դէպս, այս վերջին հետեւանքը կը ստացուի, երբ կազմակերպական հրամայականները կը տեղադրուին անցեալի արժէքներու անխախտ պահպանման այլապէս հասկնալի (թէեւ

աննպաստ ու տկարացնող...) մտայնութիւն-գաղափարաբանութեան մը խորքին վրայ: Եւ իրական կեանքի մեջ՝ կը ստացուի ուժեղ հակադրութեան վիճակ մը: Համարկում եւ ինքնակազմակերպում՝ մէկ կողմէ ծառայած են հաւաքական գոյատեւման եւ ազգային Դատի պայքարներուն, բայց միւս կողմէ, շատ կանուխէն, զանգուածին մօտ դարձած են առիթ՝ ապրելու ներկան, պատշաճելու ներկայ վայրին եւ ժամանակին. ներկայ մը՝ որ սակայն հարկատու է «ապօրինի» արժեքներու համակարգի մը: Անխուսափելի է, որ նոյնիսկ կազմակերպական գաղափարախօսութիւնն ու տիրող մտայնութիւնը իւրացուցած անհատներու մօտ, երկուութեան այս վիճակը արտայայտուի իբր մարդկային օտարումի վիճակ եւ ապրում, իբր դժուարութիւն մը՝ հայութեան յղացքը բանալու, ուժականացնելու, անոր համարկիչ ուժին ու կենսունակութեան հաւատալու...

* * *

1992ին՝ յայտնօրէն հայրենի կլանող իրականութեան վերիվայրումներուն իբր հետեւանք, «Սփիւռք» եզրը դուրս քշուած՝ անհետացած է համապատասխան վաւերաթուղթերէն, փոխարինուած՝ «Արտերկիր»ով, չհաշուած մէկ-երկու երեւումներ (հաւանօրէն՝ պատահական): Ուզուած քա՞յլ մըն է՝ նախապէս Սփիւռք կոչուած իրողութիւնը փոխարինելու «արտ-երկիր» բացասումի եզրով (այն որ Երկիրէն դուրս է, այն որ Երկիր չէ...), թե՞ պարզ զուգահիւսութիւն... Արդէն, «Արտերկիր»ի յիշատակման գլխաւոր առիթն ալ՝ անոր կառոյցներու ամրապնդման կրկնուած հրամայականը, կ'առնչուի նորանկախ «Հայաստանի հետ սերտ յարաբերութեանց». մինչ անոր՝ «քաղաքականօրէն պարտադրուած գոյակիճակ» ըլլալը կը կապուի քաղաքացիութեան օրէնքի հարցին:

* * *

Ութ տարի ետք, 2000ին, սակայն, ժողովական վա-

լերաթուղթերու պատգամին եթէ ոչ բովանդակութիւնը, շէշտը գոնէ կը փոխուի. բայց մանաւանդ՝ «Սփիւռք» եզրը կը վերադառնայ անոնց բառամթերքին.-

«Վերջին տասնամեակին, Սփիւռքը հիմնականին մէջ ապրեցաւ նորանկախ Հայաստանի Հանրապետութեան ցաւերով եւ յաջողութիւններով: Իր քաղաքական, տնտեսական եւ կազմակերպական սահմանափակ կարելիութիւնները անսակարկ օգտագործուեցան ի խնդիր մանուկ հանրապետութեան հզօրացման եւ հայրենի ժողովուրդի ապահովման:

«Դժբախտաբար, մէկ կողմէ իշխանութեան վանդական քաղաքականութիւնը եւ միւս կողմէ հայրենի պետականութեան հզօրացման աշխատանքներու դանդաղ առաջխաղացքը առիթ չընծայեցին որ Հայաստան իր կարգին օգտակար հանդիսանար Սփիւռքին: Առ այդ, ներկայիս Սփիւռքը կը գտնուի մասամբ ուժասպառ վիճակի մէջ եւ պարտաւոր է վերահաստատել իր կարողականութիւնը...

«Գաղութները առհասարակ կը դիմագրաւեն նիւթական տազնապները յաղթահարելու եւ կառոյցներու բնականոն գործունէութիւնը ապահովելու անյետաձգելի պահանջը... Այս դժուարութիւններու յաղթահարումով է որ Սփիւռքը կրնայ նոր թափով մասնակցիլ հայրենիքի հզօրացման եւ պետականութեան կերտման աշխատանքներուն»:

Ախտաճանաչումներու շարք մը յիշեցնող այս հաստատումները կարելի է ընկալել-մեկնաբանել իբր սփիւռքեան ինքնութեան ու տազնապի՝ անցեալի անբաւարար ճանաչման որոշ քննադատութիւն մը, սրբագրութիւն մը՝ գաղափարաբանական-պաշտօնական մակարդակի վրայ այլեւս: Կարելի է նաեւ հոն տեսնել հակառակը - հաւատարմութիւն՝ Սփիւռքը «միջոց» նկատելու, զայն իբր այդ խնամելու հին պատկերացման. արագ հակազդ ու մարտավարական պարզ ճշգրտում, թելադրուած՝ ՀՀ անկախացման թանձրացական պայմաններէն:

Սակայն 2004ի «Որոշումներ»ը կը հաստատեն հակումը դեպի լուրջ մեկ վերանայումը Սփիւռքի ինքնութեան ու կարգավիճակին՝ ազգային ռազամավարութեան ընդհանուր ծիրին մէջ: Ու անբաւարարութիւններու եւ տագնապի թերեւս ուշացած անդրադարձի մը կողքին՝ կ'առաջադրեն դարմանումի հիմնական ձեւեր: Ընդգծումները իմս են:

«Սփիւռքի կազմակերպման գործին տալ նոր ուժականութիւն, բովանդակութիւն եւ որակ, ձգտելով անոր բոլոր հատուածներու կարողականութեան հզօրացման...

*«Սփիւռքի կազմակերպումը եւ անոր կարողականութեան լաւագոյն ձեւով օգտագործումը հայ ազգային ռազմավարութեան մաս կը կազմէ: Սփիւռքը կազմակերպելու մեր աշխատանքներուն մէջ պէտք է ձգտիլ **ներգրաւելու եւ կազմակերպ ձեւի մէջ դնելու սփիւռքահայութեան բոլոր շերտերու** կարելիութիւնները: Սոյն աշխատանքին պատրաստի ենթահող են համահայկական տեսլական, կառոյց եւ գործելու կարողականութիւն ունեցող կազմակերպութիւնները...*

*«Ծրագրուած ու հետեւողական աշխատանքով Սփիւռքի կազմակերպական կեանքին մասնակից դարձնել վերջին շրջանին Յայաստանէն, Արեւմտեան Յայաստանէն, Թուրքիայէն եւ այլ երկիրներէ արտագաղթած **նորաստեղծ սփիւռքահայ հաւաքականութիւնները**: Միաժամանակ, կազմակերպուած աշխատանքով, Գ.Յ. Դաշնակցութեան՝ մասնաւորաբար Գ.Յ. Դ. երիտասարդականի շարքերը համալրել այդ տարրերով...*

*«Զթուլացնելով հանդերձ մեր ուղեկից կազմակերպութիւնները, նախաձեռնել նոր ոչ-կառավարական կազմակերպութիւններու (NGO) ստեղծումին, որոնք աւելի մեծ դիրութիւններ կ'ընծայեն՝ **նորանոր ժողովրդային շերտեր, խումբեր եւ անհատներ մեր շուրջը կամ պարզապէս հայութեան մէջ համախմբելու** համար...*

«Սփիւռքը մղել դեպի քաղաքական յաւելեալ կազմակերպուածութիւն, որպէսզի ան մեկ կողմէ ծա-

լալէ Հայ Դատի քարոզչական-յարաբերական աշխատանք, միւս կողմէ՝ տեղական պետական կարելիութիւնները ուղղորդէ Հայաստանի Հանրապետութեան հզօրացման...

«-Սփիւռքի մէջ հայեցի նկարագրի շարունակման կարելոր ազդակներէն է ազգային ինքնութեան հիմնաւորումը եւ սերունդէ սերունդ փոխանցումը. Հ.Յ.Դաշնակցութիւնը պարտի խթանել այս գործընթացը՝ օգտուելով արդիական արհեստագիտութեան ընծեռած կարելիութիւններէն: Անհրաժեշտ է նաեւ ստեղծել հայապահպանման նոր հայեցակարգ ու ծրագիր, որ պէտք է նկատի ունենայ Սփիւռքի կազմաւորման նոր հրամայականները եւ խուսափի կեթոյացման մտայնութենէ, ինչպէս նաեւ՝ առաջնորդուի ընթացող աշխարհաքաղաքական փոփոխութիւններու հաշուառումով:»

«Հայապահպանման նոր հայեցակարգ ու ծրագիր ստեղծելու» այս հրամայականը կու գայ աւելնալ միւս աւելի մասնակի, շօշափելի յանձնարարութիւններուն՝ կարծես հիմնաւորելու համար զանոնք, զգուշացնելու համար՝ զանոնք պարզ կազմակերպական դեղագիրներ նկատելու փորձութենէն: Անիկա հիմնական նորութիւն կը բերէ մեր ազգային քաղաքական իրականութիւնը գնահատելու մեր կերպին մէջ:

Պարզ է ու անմիջական՝ այս նորութիւններուն պատճառական կապը Հ.Յ. անկախացման եւ յարակից պատմական փաստերուն հետ - յատկապէս Արցախեան շարժումին, ինչպէս եւ հետեւող ժխտական փաստերու, որ 2000ի «Որոշումներ»ը միայն կը հպանցեն երկու նշումներով՝ «իշխանութեան վանողական քաղաքականութիւն եւ հայրենի պետականութեան հզօրացման աշխատանքներու դանդաղ առաջխաղացք»: Հարցը ապա բերել-կապելու համար հայրենիքէն Սփիւռքին չբերուած փոխադարձ օժանդակութեան մը, անով բացատրել փորձելու՝ Սփիւռքի «նիւթական սպառումը» - թէեւ, պարզ է, հարցը նիւթականէն անդի՛ն, ուրի՛շ «սպառում»ի մասին է:

Հայութեան ու յատկապէս Սփիւռքի շուրջ նոր հայեցակարգ մշակելու այս ձգտումը, կը կարծեմ, լրիւ չ'արտացոլար վերջերս «Դրօշակ»ի «Մեր Ուղին» սիւնակագլուխի տակ բանաձեւուած մեկնաբանութեան մէջ (տե՛ս «Սփիւռքը, իր Հարցերը եւ Հայ Ազգային Ռազմավարութիւնը», Ն. Պերպերեան, թիւ 3, 2004), ըստ որուն մեր կազմակերպութիւնը միշտ ալ ունեցեր է համապարփակ քննարկումի վրայ հիմնուած եւ հոլովոյթի ենթակայ սփիւռքեան ռազմավարութիւն: Եւ որ՝ այսօրուան նորութիւնները, նոյնպիսի քննարկումի ոճով, կը բխին Սփիւռքի ու հայութեան վերջին երկու տասնամեակներուն կրած փոփոխութիւններէն: Մինչ, ինչպէս փորձեցի հաստատել, փաստօրէն այդ ռազմավարութիւնը անցեալին կայացեր է Սփիւռքը առկախելու մէջ, անոր սպասողական վիճակ ու գործիքային հանգամանք տալու մէջ. գրեթէ անտեսելու՝ անոր տասնամեակէ տասնամեակ ապրած փոփոխութիւնները: Արդար պիտի չըլլար ուրեմն ստորագնահատել վերջին Ընդհանուր Ժողովներու նորութիւնները՝ զանոնք զեղչել-վերածելով հերթական ճշգրտումի մը...: Հայաստանի անկախացման պատմական իրադարձութիւնն է, որ՝ մեզ վերամղելով Պատմութեան հոսանքին մէջ՝ այսօր վերջապէս կարելի կը դարձնէ բոլորովին նոր բան մը - ապրող Սփիւռքի մը պատկերացումը «կազմաւորման նոր հրամայականներ»ով եւ «խուսափելով կեթոյացման մտայնութենէ»:

* * *

Հոս՝ քանի մը յաւելեալ մեկնաբանական ընդգծումներ.-

- Ազգային պետութիւն կերտելու, կամ զայն զօրացնելու ձգտումը, կասկած չկայ, սփիւռքի մը հիմնական մէկ ձգտումն է ընդհանրապէս, եթէ ոչ ամենահիմնականը. բնական է որ հայ Սփիւռքի պարագային եւս այդպէս ըլլայ, եթէ ո՛չ անոր ընդհանրութեան, գոնէ քաղաքական առաջատար ուժերուն համար: Բայց նոյնքան պարզ է

այսօր, որ՝ իր մինչայժմեայ ե՛լ ապագայ իրագործումներով (ինչ ալ ըլլան անոնք)՝ *հայ Սփիւռքը կոչուած է դառնալու եթէ ոչ մնայուն, գոնէ ցարդ պատկերացուածէն շատ աւելի երկարատեւ երեւոյթ՝ մեր իրականութեան մէջ: Ատոր համար ալ, հարց կը դրուի վերանայելու պահանջատիրական մեր պայքարի հիմնաւորումները, ու յատկապէս՝ պահանջատիրութիւնը Սփիւռքի «ժամանակաւորութեամբ» հիմնաւորելու դրոյթը, իրաւական, ռազմավարական թէ գաղափարական-դաստիարարկչական մակարդակներու վրայ - ըստ Սփիւռքի նորագոյն այս պատկերացման թելադրանքներուն:*

- Կենսական է հայու կերպարի ու պատկերացման ընդլայնումը: *«Նորանոր ժողովրդային շերտեր, խումբեր եւ անհատներ հայութեան մէջ համախմբելու»* կոչով կը նշուին՝ ինքզինք ու իր նոր հայու դիմագիծը փնտռող նորանկախ հայրենիքն ու մանաւանդ բազմաշերտ եւ բազմատարր Սփիւռքը: Նշենք սակայն, որ այսպէս ընդլայնուած սահմանում մը հայութեան՝ չի պղտորեր, չի լուծեր այդ դիմագիծը: Այսօրուան եւ վաղուան հայը իրամայականօրէն պէտք է ձգտի ճանչնալու իր ազգակիցները՝ իրենց այլազանութեան մէջ. պէտք է ձգտի փոխադարձ մերձեցումի մը, այդ մերձեցումով աւելի հայանալու - մնայուն առ-եւ-տուրի մը մէջ, մնայուն շարժունութեան, փոխադարձ շփումի, հաղորդութեան՝ Սփիւռքէ Զայրենիք եւ Սփիւռքէ Սփիւռք...

* * *

Այս սկզբունքները, միացած մէկուկէս տասնամեակի ծանօթ փորձառութիւններուն, կ'օգնեն նաեւ վերասահմանելու յատուկ սկզբունքներ՝ Զայրենիք-Սփիւռք յարաբերութիւններու, եւ յատկապէս փոխօգնութեան խնդրին վերաբերեալ.-

- Անկախ անկէ, որ հայրենիք մը, իբր պետական կառոյց, միշտ աւելի «գօրաւոր» է Սփիւռքէն,- առողջ սկզբունքը՝ *խրաքանչիւրի ինքնաբաւութիւնն է եականին*

համար: Գիտենք անպատեհությունները, երբ հայրենիք մը միակողմանիօրէն կը ստանայ իր սփիւռքէն. լաւ է գիտնանք նաեւ՝ ի՞նչ են հայրենիքէն կախեալ սփիւռքի մը անպատեհությունները: Անոնք կը կոչուին կրաւորակա-նութիւն, մակարութիւն եւ արագ հիւժում... Մեր պարագային, հայրենիքէն գալիք օժանդակությունները (հոս կրնայ մտածուիլ առաւելաբար մշակութայինի մասին...), եթէ չկատարուին յարմարագոյն ձեւով, կրնան Սփիւռքի մէջ զարգացնել այդպիսի վնասակար գիծեր...

- Ինքնաբաւութեան վերը նշուած պայմանի կողքին, փոխօգնութիւնը պարտի, իբր լրացում, կատարուիլ *որակի, ձեռնհասութեան, փոխադարձ կարիքներու ճանաչման* եւ անոնց հանդէպ *յարգանքի* բացարձակ պայմաններու մէջ:

- Կարելոր է, որ տեղայնութեան, գաւառային եսակեդրոնութեան դեմ ապահովուած ըլլան հայութեան բոլոր հատուածները - ներառեալ հայրենի հայութիւնն ու հայրենի պետութիւնը, քանի անոնք եւս զերծ չեն եսակեդրոն մտայնութեան, բիւրկրատական անգործօնութեան եւ այլ նման վտանգներէ: Օրինակներ չեն պակսիր՝ երկու ուղղութիւններով. լսած ենք Սփիւռքէն Հայրենիք ուղղուած որոշ «վերէն նայող» ու միակողմանի տնտեսական մօտեցումներու մասին: Միւս կողմէ, դիտուած են ու կը դիտուին անլուրջ մօտեցումներ՝ հայրենի այս կամ այն հաստատութենէն, Սփիւռքի մշակութային կարիքներուն հանդէպ:

- Յարաբերական մարզի՝ մեր մօտ առկայ այսպիսի դժուարութիւններ կը դիտուին յաճախակիօրէն նաեւ ա՛յլ «սփիւռքատեր» ազգերու մօտ (ներառեալ իր յարաբերութիւններով եւ կազմակերպութեամբ երբեմն «նախանձելի» նկատուող ազգ մը...): Նկատուած է, որ այս կացութեան անելի յաճախ պատասխանատու է ազգ-պետութիւնը՝ իր եսակեդրոնութեան հակումով, իր սփիւռքը իր մէկ ծայրագաւառը նկատելու կարծես ընդօժին վարժութեամբ:

Հաստատումներու եւ առաջարկ-սկզբունքներու այս շարքը անխուսափելիօրէն չափով մը վերացական է: Չայն շօշափելի դարձնելու համար, հոս ձայնը պիտի զիջիմ երեց ընկերոջ մը, որ մեր հետ չէ ա՛լ՝ քանի մը տարիէ իվեր: Թեւ իրեն յատուկ վիպապաշտ, բացարձակապաշտ կնիք մը կրող, մեջբերելիք հատուածս վառ գիծերով ու կենդանի շունչով կը պատկերէ վաղուան հայութեան հիմնական հարցերէն մի քանին...

Խօսքը կը փոխանցեմ իր արցախեան փորձառութիւնը ոգեկոչող Վահէ Օշականին.-

«Առտուն՝ ետ համայսարան: Ու երթաս-բարոյի արցունքոտ վայրկեաններ ուսանողներու եւ ուսուցիչներու հետ... Խառնաշփոթ զգացումներու այսքան յորձընթաց օր չեմ յիշեր ապրած ըլլալ: Տնօրէնութիւնը ողջերթի սեղան մը պատրաստած է... Դժուար է նկարագրել զգացական ջերմութիւնը...»

«Ի վերջոյ ոտքի կ'ելլեմ երկու խօսք ըսելու. «Սփիւռքը ճակատ է, ոչ թէ կենաց-մահու ճակատ, ինչպէս հոս է ու մասամբ ալ Հայաստան, սակայն Նորէն ամէն հայ պայքարո՛վ կրնայ իր ինքնութիւնը պահել, Աւստրալիա թէ Ղարաբաղ: Ատոր համար իրարու պէտք ունինք. առանց ձեզի, մենք տեղ մը չենք երթար. առանց մեզի՝ դուք ալ տեղ մը գացած չունիք: Հաւանաբար Սփիւռքի ճակատը ձեզի համար թէ՛ շատ հեռու եւ թէ նուազ կարեւոր կը թուի, սակայն մեր կոնիւր անտեսանելի ուժերու դեմ է եւ արդիւնքը տասնամեակներ ետք պիտի զգացուի. բարոյական իմաստով՝ նոյնքան մահու-կենաց կոնի է: Մենք ալ ձեր օգնութեան պէտք ունինք, եւ ատոր համար է որ հոս եկած եմ...»:

«Առտուն ճիշդ ժամուն կազմ ու պատրաստ կը սպասեմ... Լուռ ու մունջ կը տեղաւորուիմ քանի մը հոգիներու կողքին. ու ճամբայ կ'ելլենք դէպի Հայաստան... Խօսակցութիւնը նուազագոյնի իջած է կառքին մէջ, եւ առիթը ունիմ հաշուի նստելու ես ինձի հետ...»

Եկած էի՝ նախ մեղքերս քաւելու եւ յետոյ Յայու ինքնութեան մասին նոր ճշմարտութիւններ սորվելու: Ուխտագնացութեան նման բան մը եղաւ ինծի համար, եւ որուն շնորհիւ կը յուսայի խղճիս վրայ ճնշող յանցանքի անտրամաբանական զգացումը մաքրել, միանգամընդմիջտ: Թեթեւցած եմ, մէկ իմաստով, սակայն նոյն ատեն նոր պատասխանատուութիւն մը առած եմ վրաս, որ խղճի նոր հարց կը դնէ առջեւ: Այս ժողովուրդը ինչպէ՞ս կարելի է լքել իր լեռներուն մէջ, որ միս միսակը դէմ դնէ համայն հայութեան սպառնացող ստոյգ վտանգին...

«Կ'որոշեմ մնայուն կապ պահել աշակերտներու եւ պաշտօնակիցներուս հետ, գիրք դրկել համալսարանի մատենադարանին, գրել այս հոյակապ մարդոց մասին - ու պահել Սփիւռքահայու իմ ինքնութիւնս: Որովհետեւ կը զգամ, թէ այդ կերպ անելի օգտակար կ'ըլլամ ազգին: Գիտեմ, թէ օտար եմ այս մարդոց աշխարհին, եւ վատութիւն պիտի ըլլար ստել եւ ըսել, թէ ես տունս գտած եմ: Ես ու մենք Սփիւռքի մէջ տուն չունինք. օտար է տունի գաղափարը մեզի համար... Յայաստանն ու Ղարաբաղը կը շարունակեն մնալ իտեալ խորհրդանշանը անհասանելի ու սրբազան հայրենիքի: Ու մենք դատապարտուած ենք օտարութիւնը ապրելու, առանց դառնութեան կամ հաճոյքի: Մենք ուրիշ տեսակ Յայեր ենք. մարդիկ՝ որոնք պարտականութիւնը ունին Յայաստանի իտեալը շալկելու եւ տանելու, սրբութեան մը նման:

«Կառքը կ'ոստոստէ դէպի Լաչին: Յաջողա՞ծ եմ իմ առաքելութեանս մէջ:

«Այո, կը մտածեմ,- գոնէ ուրիշ, իրենցմէ տարբեր Յայերու կարելիութեան գիտակցութիւնը դրի ուսանողներու մտքին մէջ: Գիտեն, թէ առանձին չեն: Ոչ ալ ես: Յետ այսօրիկ շատ անելի դժուար պիտի ըլլայ Յայու կեանքս, բայց նոյն ատեն շատ անելի գոհացուցիչ:»

Ահա, մեր քննած փաստաթուղթերէն ետք, հայու տիպարին, անոր ընդլայնումի հրամայականին շատ անձնական մէկ պատկերացումը:

Պարզ է, այսօր մեզի պարտադրուածը, ոչ իբր ուրախալի կամ ցաւալի, այլ պարզապէս իբր սոսկական իրողութիւն, վաղուան անդրապետական հայու, մոլորակային հայու տիպարն է, ազգութեան լայնագոյն պատկերացում-սահմանումի մը համապատասխանող: Անիկա պարտի ընդգրկել, ներկայ հայրենի տարածքի եւ Արցախի ու Ջաւախքի հայութենէն անդին՝ աւանդակոչուած Սփիւռքը - հայախօս թէ օտարախօս, բայց քաղաքական դատի յանձնառութեան հսկայ կարողականութեամբ օժտուած. յաճախ լեզուի ու մշակոյթի ճանաչումէն զրկուած, բայց Յայաստանի վերաշինութեան զինուորագրուած: Ընդգրկել նոյնիսկ՝ ըստ ծագումի կէս կամ քառորդ հայ, բայց ինքզինք հայ զգացող սփիւռքահայը (քանի այսօր հայեցիութիւնը ժառանգական-բնազդականէն աւելի՝ գիտակցական հայեցիութիւն է...): Ընդգրկել ԱՊՀի անսահման տարածքին կամ արտաքին Սփիւռքի մէջ նոր-սփիւռքցի դարձած «հայաստանահայ»ը: Ու դեռ, վաղը, անիկա պետք է ատակ ըլլայ ընդգրկելու հայութեան նոր (ու շա՛տ հին) զանգուած մը եւս.- 1915էն ի վեր հարկադրաբար օտարալեզու եւ կրօնափոխ, թաղուած՝ Արեւմտահայաստանի ամայքներուն մէջ, ու հաւանօրէն վերը նշուած մեծ խումբերուն չափ պատկառելի համրանքով...:

Չգալի թիւ մը սփիւռքահայեր, մէկ կամ միւս Սփիւռքէն, անշուշտ պիտի մղուին հայրենադարձի: Բայց շնորհիւ հաւաքական այս հոգեփոխութեան, անոնք (ինչպէս եւ բուն հայրենի հայութիւնը) իրենցմէ «նուազ հայ» պիտի չնկատեն *«իրենցմէ տարբեր հայերը»* - անոնք՝ որ Սփիւռքը, սփիւռքները ունին իբր բնակութեան վայր: Բոլորն ալ պիտի ձգտին փոխադարձ ճանաչումի, *«Հայու ինքնութեան մասին նոր ճշմարտութիւններ սորվելու»*. Իրարմով ապրելու՝ օրէ օր փոքրացող այս մոլորակին վրայ: Դարու մը հեռաւորութենէն մեր հոգիի լսողութեան հասնող քրիստափորեան թելադրանքը՝ պատռելու-ջնջելու *«քարտէսներու սահմաններ»* ու *«աշխարհագրական ներ-*

կեր»,- մեզ չ'առաջնորդե՞ր արդէն այս պատկերացման, յեղափոխական նոյն ոգիով, բայց 21րդ դարեան մեկնաբանութեամբ մը... Միանգամայն իբր հրաւեր՝ ընտելացնելու մերօրեայ համաշխարհայնացումը - առաւելագոյնս շրջանցելու անոր անպատեհութիւնները, ամէն տարբերութիւն հարթող-ջնջող անոր ախորժակները... Ու նաեւ ատո՛վ զինուորագրուած՝ ազգերու ինքնուրոյնութեան պայքարի կողքին՝ Մարդու որակի պահպանման համաշխարհային նոր -ու միշտ հին- պայքարին:

ՍՓԻՒՔԻ ՆՈՐ ՕՐՎԿԱՐԳԸ

Ինքնութեան, յանձնառութեան ու գորաշարժի մարտահրաւերները համաշխարհայնացման ոլորտին մէջ

Խաչիկ Տէր Դուկասեան*

Մինչև Հայաստանի անկախացումը Սփիւռքը ինքզինք կը ճանչնար և իր դերը կը սահմաներ հայապահպանման աշխատանքներու ընդմէջէն: Ազգային ուղղութեամբ ամեն հայկական կազմակերպութիւն, ինչ ալ ըլլար իր գաղափարախօսական համակարգը, և անկախ խորհրդային Հայաստանի նկատմամբ իր կեցուածքէն, կը գործէր «գաղութ»ի ինքնամփոփ ու փակ հոգեբանութեամբ, համոզուած որ միայն հայրենի հողին վրայ է որ ազգային ինքնութիւնը կրնայ ապահով գարգանալ: Սփիւռքը, հետեւաբար, բնութագրուած էր որպէս ժամանակաւոր հանգրուան, որու հորիզոնին էր հայրենադարձութիւնը: Այնքան ատեն որ Սփիւռքը կը հասկցուէր որպէս հանգրուան, հայապահպանումը կ'ընկալուէր որպէս գաղութային հաստատութիւններու շուրջ հայորդիներու համախմբման գործնական ճիգ, և ատով ալ կը սահմանափակուէր Սփիւռքի օրակարգը:

Ազգի զարգացումը հայրենիքով պայմանաւորելու տեսութիւնը յատուկ է արդիական ժամանակներուն, հետեւանք՝ 17րդ դարու կեսերէն սկսած Եւրոպայի մէջ ազգայնութիւն կառոյցի ձևաւորման, որ կը զուգահիսփ

*.- Միջազգային յարաբերութիւններու տոկթոր, 1987-97 վարած է Պուլետոս Այրեսի ԱՐՄԵՆԻԱ թերթի խմբագրի պաշտօնը, այժմ քաղաքագիտական նիւթեր կը դասաւանդէ Արժանթինի Universidad de San Andres-ի և Հայաստանի American University of Armenia-ի մէջ:

դրամատիրական արտադրակարգի կազմաւորման: Թէ որքանո՞վ «ազգ» հասկացողութիւնը որպէս հաւաքական ինքնութեան բանաձևում արդիւնք է այս զոյգ զարգացումներուն, և հետևաբար՝ պատմական հանգրուան միայն համամարդկային ընդհանուր զարգացման ոլորտին մէջ, ինչպէս կը բացատրեն յատկապէս մարքսեան պատմական նիւթականութեան¹ տեսութեան մօտիկ պատմաբաններ,² կամ որքանո՞վ ազգը ունի յաւերժական եւութիւն ըստ Էնթընի Սմիթի և ուրիշներու, որոնք հակուած են պատճառական առաջնահերթութիւն տալ ենթակայական ու հոգեբանական ազդակներու,³ տեսական բանավէճ մըն է որ անխուսափելիօրէն կը յանգի «սահմանումային դիլեմա»-ի:⁴ Տեսական այս փակուղիէն դուրս գալու համար եղած են տարբեր փորձեր, որոնցմէ ամենէն տարածունը ազգին ըմբռնման դասաւորումն է ըստ անոր «Էթնիկական» կամ «քաղաքացիական» բնոյթի բաժանման սահմանագիծերուն:⁵ Ամեն պարագայի,

1.- Historical Materialism:

2.- Տեւենի յատկապէս Eric Hobsbawm, *Nations and Nationalism Since 1780*, Cambridge: Cambridge University Press, 1990, և Ernest Gellner, *Nations and Nationalism*, Oxford: Blackwell, 1983:

3.- Anthony D. Smith, *The Ethnic Origins of Nations*, Oxford: Blackwell, 1986; *National Identity*, London: Penguin Books, 1991. Walter Connor, *Ethno-Nationalism: The Quest for Understanding*, Princeton: Princeton University Press, 1994:

4.- Sheila L. Croucher, «Perpetual Imagining: Nationhood in a Global Era», *International Studies Review* (2003) 5, p. 2.

5.- Պատմաբան Hans Kohn հաւանաբար եղած է առաջինը, որ 1944ին նման տարբերութիւն մը բանաձևած է *The Idea of Nationalism* (New York: Macmillan) գիրքով, ըստ Croucher-ի (*Op. Cit.*, p. 4): Համաձայն այս տարբերումի սահմանագիծին, ազգի «Էթնիկական» բնոյթի հասկացողութիւնը անցեալի աւանդութիւններու բիրտդացման ոլորտն է, մինչ «քաղաքացիական» ազգի ըմբռնումը կը վերաբերի սահմանադրաբար ճշդուած արժէքներու յանձնառութեան, որոն արտայայտութեան գերագոյն ձևն է հաստատութիւններու -institutions- կերտումը: Ինչպէս այս տարբերումի քննադատները արդարօրէն կը հաստատեն, նման մօտեցում մը գերծ չէ ազգի «լաւ» ու «վատ» ըմբռնումներու յանգելու փորձութենէն, կամ, ամեն պարագայի, տեսութեան այդ ուղղութեամբ շահագործումէն:

ազգի «սահմանումային դիլեմա»ն կը յուշէ, որ ազգը որպէս ինքնագիտակից հաւաքականութիւն գոյութիւն ունեցած է պատմական տարբեր ժամանակներու, սակայն իւրաքանչիւր ժամանակ սահմանուած է տարբեր ձևով: Այս տրամաբանութեան հետևումով, ազգի շարունակականութիւնը կ'ապահովուի միայն պատմական տուեալ ժամանակի մը պայմաններուն մէջ, և անոնց համաձայն եղած սահմանումի մը հաւաքական ճիգով:

Ազգի սահմանումը սահմանման ճիգի առկայութեամբ պայմանաւորող տեսական այս մօտեցումը կոչուած է «ազգ» յղացքին գիտական հասկացողութիւն մը տալու, և այս իմաստով հիմնականին մէջ կը հետաքրքրէ տեսաբաններուն: Բայց, այն նաև գործադրելի է առանձին պարագաներու: Այսպէս, Սփիւռքի հանգրուանականութիւնը, որ ազգի գոյութեան շարունակութիւնն ու զարգացումը կը պայմանաւորէ ազգ-հայրենիք փոխ-կապուածութեամբ, արձագանգ է հայութեան 18-19րդ դարերու Չարթօսքի հոլովոյթով սահմանուած հաւաքական ինքնութեան արդիական բնութագրման, որ քաղաքական ծրագրի վերածուեցաւ մասնաւորաբար ազգային-ազատագրական շարժումով: Տեղասպանութիւնը վիժեցուց ազգ-հայրենիք ամբողջականութեան մը ձգտող այդ ծրագիրը: Հայաստանի խորհրդայնացումը, իր կարգին, խզումի ազդակ եղաւ հայութեան համար, հակառակ անոր որ, այո՛, կայ առարկայական ենթահող՝ պաշտպանելու այն տեսակետը, որ հակառակ իր գաղափարախօսական շեշտուած կնիքին, Խորհրդային Հայաստանը երաշխաւորեց ազգ-հայրենիք ամբողջականութեան զարգացումը: Սփիւռքը, ուրեմն, հայութեան Ազգային Չարթօսքի ծրագիրն է որ իր եութեան մէջ առաւ ու յարմարեցուց յետ-Համաշխարհային Առաջին Պատերազմի 20րդ դարու պայմաններուն, այնպէս ինչպէս այդ պայմանները ինք ընկալեց ու ապրեցաւ:

Ոչինչ, սակայն, կը հաստատէ որ ազգային զարգացումը պայմանաւորուած է ազգ-հայրենիք փոխ-կապուա-

ծութեամբ: Ընդհակառակը, ինչպես Խաչիկ Թեօլեօլեան վերլուծած է, պատմականօրէն անելի վաւերական եղած է հայութեան «անդրազգութիւնը»,⁶ քան իր ծննդավայրին կառչած մնալու նախանձախնդրութեամբ զարգանալու անոր փառաբանուած տեսչը:⁷ Սփիւռքի հանգրուանականութիւնը, հետևաբար, կը հասկցուի միայն յետ-Եղեռնեան ժամանակաշրջանի իւրայատուկ ոլորտին մէջ: Այլապէս, հայրենի հողէն դուրս զարգանալու իմաստով, այն նորութիւն չէ հայութեան համար: Այդուհանդերձ, Սփիւռքի հանգրուանականութիւնը տիրապետող պատում եղաւ երկարաժամկետ աշխատանքներու ծրագրաւորման հոլովոյթին մէջ: Արդիւնքով, օրինակի համար, Սփիւռքի ինքնաճանաչման գիտական ուսումնասիրութիւններ, առնուազն մինչև 1980ական թուականներու կէսերը, պարզապէս բացակայ էին: Իսկ այն հազուագիւտ ճիգերը որ եղած էին կամ սկսան երևան ելլալ 20րդ դարու վերջին տասնամեակին, անհատական նախաձեռնութիւններու արդիւնք են և ոչ թէ հաւաքական մտահոգութեան առարկայ կամ շահ:

Արցախեան ազատամարտը, երկրաշարժը և վերջապէս Հայաստանի անկախացումը Սփիւռքը զրկեց իր ինքնաճանաչման անելի քան եօթանասունամեայ պատումէն: Մինչև ինիսունական թուականներու կէսերը առնուազն, ճիգ տարուեցաւ իրականութիւն դարձնելու այն ինչ որ հաւատոյ հագանակ էր մինչ այդ և յանկարծ վերածուեցաւ աշխատանքային նոր դաշտի, որ բանաձևուեցաւ որպէս «դէպի երկիր»: Բայց, անկախ 1987-94 թուականներուն ցարդ Սփիւռքի մէջ միայն գործող կազմակերպութիւններու հայրենիք վերադառնալու կամ հոն տնտեսական ներդրումներ կատարելու անկեղծ նախաձեռնութիւններու արժևորումէն, այսօր յստակ են հետետալ իրականութիւնները:

6.- Transnation.

7.- Khachig Tololyan, «Elites and Institutions in the Armenian Transnation», *Diaspora* 9:1,2000:

- Սփիւռքէն Հայաստան մասսայական զօրաշարժ տեղի չունեցաւ:

- Ընդհակառակը, արցախեան ազատամարտի ու Հայաստանի անկախացման գոյգ հոլովոյթներու տարիներուն, զանազան պատճառներով Հայաստանէն մօտ մէկ միլիոն մարդ արտագաղթեց, առանց վերադառնալու ծրագիր ունենալու:

- Հայրենի նոր իշխանութիւններուն համար, Սփիւռքի հայրենադարձութիւնը օրակարգի նիւթ չէր, և երբ եղաւ՝ երբեք խորհրդանշական նախաձեռնութիւններէն անդին չանցաւ:⁸

- Հայրենի հասարակութեան համար ալ մասնաւոր մտահոգութիւն չէր Սփիւռքի հայրենադարձութիւնը:

- Հայաստան հաստատուող սփիւռքահայերը այդ նախաձեռնութիւնը ամին զուտ անձնական որոշումով և ոչ թէ որպէս արդիւնք հաւաքական ծրագրաւորումի:

Մինչ այս իրականութիւնները իրենք զիրենք կը հաստատէին, Սփիւռքը, անկարող իր հանգրուանականութեան ցարդ արմատացած պատումին միթոսէն⁹ ձերբազատելու,

8.- Յատկապէս 1998ի իշխանափոխութենէն յետոյ, երբ Զոչարեանի կառավարութիւնը աւելի հասկացողութիւն ցոյց տուաւ Սփիւռքի նկատմամբ և նախաձեռնեց Հայաստան-Սփիւռք իրերայաջորդ խորհրդածողովներու կազմակերպումին: Այդ հաւաքները, ահաւասիկ, հիմնականօրէն խորհրդանշական արժեք ունեցան, առանց գործնական շօշափելի արդիւնքներու:

9.- «Վերադարձի միթոս» յղացքը գործածած է արժանթինցի ընկերաբան Պրիսա Վարելա, որ ցարդ միակ վերլուծողն է որ արժանթինի հայ համայնքի կազմաւորման ու զարգացման մասին ընկերաբանական գիտաշխատութիւն մը կատարած է՝ կարևոր ներդրում մը կատարելով ցարդ գոյութիւն ունեցող աւելի պատմական բնոյթի ուսումնասիրութիւններուն: Տեսել՝ Brisa Varela, *La migracion armenia en la Argentina: La ruptura del mito del retorno*, Buenos Aires: Editorial Dunken, 2002:

փորձեց «վերադարձ»ը վերաբանաձևել հայրենիքի օգնութեան երկարաժամկետ յանձնառութեամբ: «Վերադարձ»ի այս քիչ մը բռնագբօսիկ վերաբանաձևումը, խորքին մէջ *փաթեթիք* ինքնարդարացում մըն էր՝ քաղքենի հանգիստը հայրենադարձութեամբ խանգարելու անպատրաստ սփիւռքահայուն համար, ի բացառեալ, անշուշտ, հազուագիւտներէ:

Միւս կողմէ, Յայաստանի մէջ իշխանութիւնը իր ձեռքերուն մէջ առնող ղեկավարութեան, թէ սեփականաշնորհման գործընթացով իր դրամագլուխը կուտակելու հետամուտ նոր կազմուող հայրենի դրամատէր դասակարգին համար ալ Սփիւռքի զանգուածային վերադարձը առնուազն անյարմար էր, եթէ ոչ պարզապէս անբաղձալի: Ե՛լ քաղաքական իշխանութեան հետամուտ, ե՛լ երկրի նոր կազմաւորուող դրամատէր դասակարգի ներկայացուցիչներուն համար Սփիւռքը անհաւասար մրցակցութեան վախ կ'առթէր: Աւելի անհեթեթ քան հասկնալի այս վախը, ամէն պարագայի, յանգեցաւ Սփիւռքի ազգային պարտականութիւնը հայրենիքին օգնելու նախանձախնդրութեամբ սահմանելու և սահմանափակելու քաղաքականութեան: Երկուստեք, հետևաբար, լուռ հասկացողութեան մը կը հասցուէր՝ Սփիւռքի դերակատարութիւնը տեղադրելու հայրենիքին օժանդակութեան ոլորտին մէջ՝ հոն տեղի ունեցող գործընթացներուն չխառնուելու յանձնառութեամբ: Յեզնականօրէն այս կը նշանակէր անգամ մը ևս Սփիւռքը հեռու պահելու քաղաքական յանձնառութենէ, ձևով մը վերադառնալով մինչև վաթսունական թուականներու կեսերուն տիրապետող «մի՛ խառնուիր»ի հոգեբանութեան:

Թէ Յայաստանի մէջ ո՛վ ի՛նչ շահեցաւ Սփիւռքի նկատմամբ որդեգրուած այս քաղաքականութենէն՝ առանձին քննարկման սիրօ է: Իրողութիւն է, սակայն, որ Յայաստանի անկախացումէն յետոյ հայրենի ընկերային, տնտեսական ու քաղաքական զարգացումները ունեցան իրենց յատուկ տրամաբանութիւնը, որուն վրայ Սփիւռքի

ագղեցութիւնը եղաւ աննշան, այնպէս ինչպէս աննշան եղաւ Սփիւռքի մասնակցութիւնը նշեալ զարգացումներուն, այնքան մը, որ 1998ի իշխանափոխութիւնը անկարող եղաւ կացութիւնը արմատապէս փոխելու, հակառակ այդ մասին եղած ամբողջ բարի կամեցողութեան:

Առանց մասնաւորաբար ճակատագրապաշտ ըլլալու, այսօր յետադարձ ակնարկով մը պէտք է ընդունիլ որ 1987-91ին սփիւռքեան համայնքներու մէջ զգալիօրէն շօշափելի խանդավառութիւնը վերադարձի յոյսերու իրականացման մասին գեղեցիկ պատրանք մըն էր միայն, որ շօշափելի ոչինչ տուաւ: Ընդհակառակը, օրօրուելով հայրենադարձութեան պատրանքով և ճիգ թափելով իրական վերադարձին փոխարինող տարբերակներու փընտըռտուքին ուղղութեամբ, Սփիւռքը չէր անդրադառնար որ կը փախցնէր նոր ժամանակներու յառաջդիմութեան գնացքը՝ համաշխարհայնացման¹⁰ գործընթացը: Արդիւն-

10.- «Հանաշխարհայնացում» -globalization- յղացքը նոր չէ, ո՛չ ալ գործընթացը՝ յատուկ 20րդ դարու վերջին երկու տասնամեակներուն: Իր ընդհանրութեան մէջ, համաշխարհայնացումը կը սահմանուի որպէս մարդկային ընկերութիւնները իրարու մօտեցնող հոլովոյթ, որուն ենթահողը արդի ժամանակներուն տնտեսական ու արհեստագիտական են, ի տարբերութիւն պատմական այլ բնոյթի «համաշխարհայնացումներու», որոնց կարգին, օրինակի համար, Զրիստոնէութեան և իսլամութեան արագ տարածումը: Համաշխարհայնացման արդի ժամանակներու առաջին ալիքի ծննդոցը առընչակից է դրամատիրութեան կազմաւորման և տարածման, սակայն ընկերային գիտութիւններու մասնագէտներու մօտ գրեթէ համախոհութիւն կայ 19րդ դարու ճարտարարուեստական Յեղափոխութիւնը դիտելու որպէս հիմնական շարժիչ ուժ երկրի տարբեր տարածաշրջաններ բնակող մարդկային հասարակութիւնները իրարու մօտեցնելու գործընթացին: Պարզ է, որ ամէն ընկերային գործընթաց տնտեսական ենթապատճառներու կողքին նաև կը խթանուի քաղաքական որոշումով, և անոր ետին միշտ ալ կանգնած կ'ըլլայ քաղաքական ուժ մը: 19րդ դարու համաշխարհայնացման առաջին ալիքի յառաջապահը եղաւ Բրիտանական Կայսրութիւնը: Ինչ որ 20րդ դարու 70ական թուականներէն սկսած, 80ական թուականներու ձևաւորումը և յետ-Պաղ Պատերազմին արագացաւ համաշխարհայնացման երկրորդ ալիքն է, որուն

Նիւթական ենթահողը համակարգիչի ստեղծումով ու զարգացումով հաղորդակցական միջոցներու արհեստագիտութեան մեծաքայլ յառաջդիմութիւնը և ֆինանսական շուկաներու ազատականացումն է, իսկ քաղաքական խթանն ու յառաջապահը՝ Ամերիկայի Միացեալ Նահանգները: Անկարելի է հոս անդրադառնալ համաշխարհայնացման երկրորդ ալիքի տարբեր երեսներուն, Նոյնիսկ իրենց ընդհանրութեան մէջ, այնքան որ ճոխ են այդ մասին վերլուծական գրականութիւնն ու ուսումնասիրական ծրագիրներու ամբողջութիւնը: Ինչպէս ամէն հասարակական գործընթաց, համաշխարհայնացումն ալ զերծ չէ իր ներքին հակասութիւններէն և անոնց յաճախ տրամային ու ողբերգական դրսևորումներէն: Աննախընթացօրէն արագացնելով հանդերձ զարգացման գործընթացը, համաշխարհայնացումը նաև ծնունդ տուաւ հասարակական սուր բևեռացման և ինքնութիւններու աւաղաղման -հոլովոյթ մը, որ յաճախ կը բնութագրուի որպէս «արեւմըտականացում», կամ աւելի պատկերաւոր ձևով «քրքաքլոյացում» կամ «մըքտոնալտացում»: Ամէն պարագայի, իր դրական ու ժխտական երեսներով, համաշխարհայնացումը համամարդկային զարգացման ընդհանուր յատկանիշն է 21րդ դարուն, և իւրաքանչիւր հաւաքականութեան կը մնայ այդ գործընթացին հանդէպ ինչպէ՛ս դիրքորոշուելու որոշումը: Սփիւռքի բոլոր համայնքներն ալ բնականաբար մաս կը կազմեն այս գործընթացին, սակայն տրուած ըլլալով իրենց օրակարգի այսպէս ըսուած «հայաստանակեդրոնացումը», համաշխարհայնացման մասին ընդհանուր բանավեճ, դիրքորոշում, այլև յատուկ քաղաքականութիւն տարբեր կազմակերպութիւններու կողմէ պարզապէս բացակայեցաւ: Ընդհակառակը, մինչ եօթանասունական թուականներէն մինչև ութսունական թուականներու կեսերուն նկատելի էր միջ-համայնքային աշխոյժ շարժում, ըլլայ գաղթի տեղաշարժերու բերումով և ըլլայ Յայ Դատի հետապնդման այդ հանգրուանի յատուկ մթնոլորտին պատճառով, ինսիտունականներուն տեղաշարժը ուղղուեցաւ դէպի Յայաստան: Թէ անխուսափելի էր նման եղելութիւն՝ անկասկած, ոչ ալ հարցականի տակ է նման նախանձախընդրութեան արժեքային գնահատականը: Իրողութիւն է, սակայն, որ այդ մէկը Սփիւռքը հեռացուց իր կացութեան մասին մտածելու ծրագիրներէ, ինչ որ ցաւալի է որովհետև սփիւռքեան կացութիւնը ամէն առաւելութիւն ունէր զարգացնելու ցանցային մտածողութեան ու գործելակերպի միջ-համայնքային համակարգ մը՝ հետևելով օրինակին բոլոր այն ոչ-պետական հաւաքականութիւններուն, հասարակական կազմակերպութիւններ թէ քաղաքական շարժումներ, որոնք հասկցած են 21րդ դարու մարդկային զարգացման հոլովոյթին բանականութիւնը: Այս իմաստով է, որ Սփիւռքը փախցուց համաշխարհայնացման զարգացման գնացքը երբ այն ընթացք կ'առնէր:

քով, բոլոր կազմակերպությունները իրենց ե՛լ մտածելա-
կերպին, ե՛լ գործունեության դաշտերու ու մեթոտներու
արդիականացման հրամայականին կարևորութիւնը
չկրցան ըմբռնել, ոչ ալ իրենց միջոցաւ աշխարհացրիւ
համայնքներու միջև ստեղծուող ցանցը ամրակայել:
Տագնապը, որուն ամենէն ցայտուն երեսը ֆինանսա-
կանն է, այս պայմաններուն մէջ անխուսափելի էր:

Ամէն տագնապ, սակայն, նաև խթանող է քննադատ
ու ստեղծագործ մտածողութեան, եթէ, անշուշտ, նման
ծիգ մը ընելու պատրաստակամութիւն, կամք և ատակու-
թիւն կայ: Որոշումը պիտի առնէ Սփիւռքը ի՛նք և իր մէջ
փնտռէ տագնապին ելքը, քանի որ այսօրուայ պայման-
ներուն մէջ քիչ բան կամ նոյնիսկ ոչինչ կարելի է սպասել
իրենց կայացումն ու զարգացումը ամուր հիմերու վրայ
դնելու հասկնալի առաջնահերթութեանց առջև գտնուող
հայրենի պետութենէն ու հասարակութենէն: Յետևաբար,
առանց խզումի հասնելու և իրարմէ բոլորովին ան-
ջատուելու, Սփիւռք ու հայրենիք անխուսափելիօրէն
իւրաքանչիւրը առանձին պիտի հետամուտ ըլլայ իր վե-
րապրումի, անվտագութեան ու բարգաւաճման: Սակայն
երկուքն ալ ունին երկու հիմնական մարտահրաւերներ,
որոնց տրուելիք պատասխաններէն կախում ունի մեր մէկ
ազգի ինքնագիտակցութեան գործնականացումը: Առա-
ջինը՝ ազգային համարկումն է, իսկ երկրորդը՝ համաշ-
խարհայնացման հոլովոյթին մեր մասնակցութեան
բնոյթի ու ձևերու ճշդումը:

Ազգային համարկում ըսելով պէտք չէ մեքենականօ-
րէն հասկնանք այն ինչ որ ցարդ կարգախօսային բնոյթով
կը յայտարարուի որպէս «մէկ ազգ, մէկ հայրենիք»: Իրա-
կանութեան մէջ այս կարգախօսը գերագոյն և զօրաւո-
րագոյն բանաձևումն է Ազգային Չարթօնքով սկսած
«ազգային միասնականութեան» բաղձանքներուն ու
կոչերուն: Աւելին, ազգային միասնականութեան բացա-
կայութիւնը վերածուած է «պատճառ պատճառաց»ի,
որուն կը յանգին հայութեան ամէն ձախողութիւններու ու

դժբախտութիւններու բացատրութիւնները: Անշուշտ հայութեան իւրայատուկ չէ այս միամտութիւնը, բայց ամեն պարագայի վերջինս ծնունդ կու տայ այն թիրմբնումին, որ կ'իրականացնէ մէկ հայրենիքի մէջ ազգի համախըմբումը: Խորքին մէջ այս հեռանկարը ազգ-պետութեան կազմաւորման քաղաքական ծրագրի սկզբունքն իսկ է: Հայութեան կացութեան ոլորտին մէջ, «մէկ ազգ, մէկ հայրենիք»ը հայաստանակեդրոն ուղղուածութեամբ տեղաշարժի ծրագիր կ'ենթադրէ:

Համարկումի բանականութիւնը տարբեր է: Առաջին հերթին, այն աւելի հորիզոնական գործընթաց է, որ կը միտի ե՛ւ Սփիւռք-հայրենիք մօտեցման, ե՛ւ սփիւռքեան տարբեր համայնքներու կամրջման: Երկրորդ, թէև ամեն քաղաքական ծրագրի և ընկերային գործընթացի նման համարկումը ևս ղեկավարում կ'ենթադրէ, այս վերջինը հեռու է միակեդրոն կամ հիմնականօրէն պետական մակարդակով ձևաւորուելու ամեն փորձութենէ: Ընդհակառակը, համարկումը կ'ենթադրէ աւելի բազմակեդրոն ու համախոհական ղեկավարութիւն, որ կ'ապահովէ ե՛ւ ազգի ներքին բազմազանութիւնը, ե՛ւ ժողովրդավարական էթիկան:

Ինչ կը վերաբերի համաշխարհայնացման հոլովոյթին մասնակցութեան բնոյթի ու ձևերու ճշդումին, կան հիմնականօրէն երեք իտեալականացած ուղիներ: Առաջինը՝ պահպանողականն է, ե՛ւ բառին ամենատարրական իմաստով ե՛ւ անոր բոլոր նրբերանգներով: Պահպանողականութիւնը կ'ենթադրէ հեռու մնալ նորութիւններէ, որոնք կրնան հարցականի տակ առնել, ընդհուպ մինչև քանդել ցարդ տիրապետող մտակաղապարներ, կազմակերպական կառոյցներ ու աշխատանքի դաշտեր ու ոճեր: Պահպանողականութիւնը ցարդ եղած է հայապահպանումի բնոյթը: Այն նաև ազգի էթնիկական սահմանման կ'առաջնորդէ: Համաշխարհայնացման պայմաններուն մէջ, պահպանողական մօտեցումը կ'ենթադրէ անտեսել համաշխարհայնացումը, շարունակել ապրիլ այնպէս

ինչպես կարծես ամեն ինչ կը շարունակուի նոյն ձևով: Բայց քանի այդ մեկը անկարելի է, քանի որ համաշխարհայնացումը կ'ենթադրե փոխուելու մղող ճնշում, անխուսափելի կը դառնայ հակազդեցութիւնը: Այսպես, համաշխարհայնացման նկատմամբ պահպանողական կեցուածքը կամ կը տանի դեպի առկայ իրականութեան անդամալուծութիւն և, ի վերջոյ, հիւծում, կամ ալ կը վերածուի ակտիւ հակա-համաշխարհայնացման, ձևով մը ամեն նորութեան մերժումի շարժումի: Այս վերջինը Սփիւռքին կ'առաջնորդէ յաւելեալ կեթօթոյացման, կամ կեթօթոյացումը ամրակայելու, իսկ Հայաստանի մէջ կրնայ յանգիլ ազգայնամոլութեան:

Պահպանողականութեան տրամագծային հակադրութեան իտեալականացած հակազդեցութիւնը «թող տուէք ըլլալ»ու¹¹ ընթացքի մը, ընդ որում կ'ընդունուի ամեն ինչ որ համաշխարհայնացումը կը հրամցնէ, կամ, հարագատ մնալու համար «թող տուէք ըլլալ»ու ենթադրած «առևտրական» տրամաբանութեան, կը ծախէ: Զրետիթ քարթերու առաջարկած դիւրին սպառումի հմայումին նման, համաշխարհայնացման ամեն առաջարկածը ապագայի հաշուոյն գնելն ալ շուտով սնանկացման կ'առաջնորդէ: «Սնանկացում»ը Սփիւռքի պարագային պետք է հասկնալ ձուլումի իմաստով, իսկ Հայաստանի պարագային պարզապէս անձնատուութիւն գլոբալ շուկայի քմահաճութեան պարտադրանքներուն:

Կայ երրորդ ուղի մը, որ քննադատական մօտեցումով համաշխարհայնացման հոլովոյթին մասնակցութիւնն է, որուն արդիւնքով իրականացած փոփոխութիւնը կը բանաձեւուի որպէս «տարրասեռում»: ¹² Իան Նիտերվին Փիեթերզ կ'օգտագործէ նախապէս մշակութային

11.- Laissez-faire:
12.- Հայացումը hybridization յղացքին, որ Յարութ Զիւրքճեանինն է: Տարրասեռումը, բնականաբար, պետք չէ նոյնացնել այլասեռման հետ:

ձեւերու մասին բանաձևուած տարրաստեղծման սահմանումը, որ գործադրելի կը համարէ նաև ընկերային կազմակերպական կառոյցներու պարագային. տարրաստեղծումը այն «միջոցներն են, որոնց հետևումով ցարդ գոյութիւն ունեցող ձևերը կը զատուին առկայ գործնականացումներէ և կը վերահամադրուին նոր ձևերով ու նոր գործնականացումներով»:¹³ Տարրաստեղծումը է՛լ համաշխարհայնացման արդիւնքով տեղի ունեցած փոփոխութիւններու ամենաառարկայական բանաձևումն է, է՛լ միաժամանակ ստեղծագործական հոլովոյթ մը, որուն գիտակցումն ու ծրագրումը կը յանգի «տարրաստեղծմի քաղաքականութեան»:¹⁴ Տարրաստեղծումը որպէս «ընկերային տարածքի վերստեղծման ազդակ»¹⁵, եթէ մտածուի նաև որպէս քաղաքական ծրագիր, կրնայ ստեղծել հայութեան գլոբալ իրականութեան ընկերային տարածութիւնը, առ այդ՝ ճշդել համաշխարհայնացման գործընթացին ազգի մասնակցութեան բնոյթն ու ձևը:

Ազգային համարկումն ու համաշխարհայնացման մասնակցութեան բնոյթի ու ձևերու ճշդումը գիրար ամբողջացնելով կը կազմեն գլոբալ աշխարհի մէջ ազգակերտման¹⁶ ծրագիրը: Սփիւռքի նոր օրակարգը այս ծրագրին մասնակցութեան, հետևաբար՝ վերոյիշեալ գոյգ հիմնահարցերուն գործնական լուծումներ տալու նախանձախնդրութեամբ պետք է կազմուի:

13.- Lan Nederveen Pieterse, *Globalization & Culture: Global Melange*, Lanham, Maryland: Rowan & Littlefield, 2004: Բնագիրը անգլերէն է, թարգմանութիւնը՝ հեղինակին: Անգլերէն պարբերութիւնը հետևեալն է. «the ways in which forms become separated from exiting practices and recombine with new forms and new practices». Բնագրին մէջ մէջբերումը կատարուած է William Roweի և Vivian Schellingի գիրքէն (*Memory and Modernity: Popular Culture in Latin America*, London: Verso, 1991, p. 231):

14.- Նոյն, էջ 74:

15.- «... a factor in the reorganization of social spaces»: Նոյն էջ 83:

16.- Nation-building:

Այս իմաստով, Սփիւռքի համար կը կարևորուին յատկապէս հետևեալ խնդիրները, որոնք իրենց ամբողջութեան մէջ կը կազմեն Սփիւռքի նոր օրակարգը.

1- Սփիւռքի Արևմտահայ ինքնութեան զարգացումը իր բոլոր երեսներով:

2- Սփիւռքի բազմազանութեան արժևորումը որպէս ազգային զարգացման հոլովոյթին անբաժան մաս:

3- Համաշխարհայնացման բանալի մարզերու ճշդում՝ աշխատանքային ներդրման ծրագրումի հեռանկարով:

4- Գաղութային ինքնամփոփ կառոյցներու վերադասաւորում՝ ի հարկին, շրջանային չափանիշով:

5- Հաւաքական շահի վերասահմանումը անհատ հայորդիներու յաջողութեան ընդմէջէն:

Այս հինգ խնդիրներուն առանձին անդրադառնալէ առաջ անհրաժեշտ է ընդգծել, որ Սփիւռքի իւրաքանչիւր կազմակերպուած հայ հաւաքականութիւն, որ աւանդաբար կը բնորոշենք որպէս համայնք, այլև իւրաքանչիւր համայնքի մէջ գործող տարբեր կազմակերպութիւններ բնականաբար իրենք է որ կ'որոշեն իրենց գործունեութեան դաշտը, յանձնառութեան տարողութիւնն ու նպատակները: Հետևաբար, չկայ, երբեք չէ եղած Սփիւռքի մէկ և միակ «օրակարգ», բացի ինքնաճանաչման հասարակաց յայտարարներէ, ընդհանուր *փաթրոն* մը՝ այնքան ընդունելի բոլորին համար որ գրեթէ կառուցային *-structural-* բնոյթ ունենայ:

1- Սփիւռքը Արևմտահայութիւնն է

Հայութեան աշխարհացրիւ կացութիւնը պատմականօրէն նորութիւն չէ: Սակայն Սփիւռք յղացքը պատմական հայրենիքէն դուրս ապրող հայութեան համար գործածուելու սկսաւ միայն Յեղասպանութենէն յետոյ: Նախապէս հիմնականօրէն կը գործածուէր գաղթականու-

թին, կամ պանդխտութիւն յղացքները: Բնականաբար, անոնց փոխարինումը աւելի յաճախակիօրէն գործածուող «Սփիւռք»ով գիտակցական քայլ մը եղած է, ընկերային կառուցում մը,¹⁷ ինչպէս պիտի բնորոշուի ինքնաճանաչման ամէն գիտակցուած հաւաքական քայլ: Այսպէս, Սփիւռքը իր սահմանումով իսկ կը բնորոշուի որպէս Եղեռնի հետեանք: Կայ, ուրեմն, Սփիւռքի ծննդոց մը, գոյութեանական հարց մը, որ Աղէտն է: Անոր գոհը ոչ միայն հիմնականօրէն արեւմտահայութիւնն էր, այլև ամբողջ արեւմտահայ մշակոյթը որ կը գտնուէր իր ծաղկումի հանգրուանին: Յետևաբար, Յեղասպանութենէն վերապրումը միայն ֆիզիքական իմաստով սերունդներու շարունակականութեան ապահովումը չէր, այլ՝ մշակոյթի պահպանումը՝ հեռու այն միջավայրէն ուր ան ծնունդ առաւ ու զարգացաւ: Սփիւռքի սահմանման նման սահմանափակում դուրս կը ձգէ ե՛լ նախա-Եղեռնեան գաղութներ, ինչպէս Իրանահայ գաղութը և, թէև աւելի խնդրայարոյց ձևով, Պոլսահայութիւնը, ե՛լ Յայաստանէն արտագաղթածներով կազմուած, կամ կազմաւորուող համայնքները նախկին խորհրդային տարածքի երկիրներէն մինչև Եւրոպա, Ամերիկաներ ու Աւստրալիա:

Անմիջապէս աւելցնենք, որ Սփիւռքի սահմանումային նոյնացումը արեւմտահայութեան հետ չ'ենթադրէր, որ փանթրքականութեան հայատեաց ցեղականութիւնը սպառնալիք չէր նաև ունէ հայու, ո՛ր որ ալ ապրէր ան, կամ Աղէտը հարուած չէր ազգին իր ամբողջականութեան մէջ: Ոչ ալ Սփիւռքի այս սահմանումով կը նսեմացուի Յայաստանէն դուրս ապրող հայ այլ հաւաքականութիւններու ազգակերտումի դերակատարութիւնը, կամ կը ժխտուի անոնց տեղը հայութեան զարգացման երկու վերոնշեալ հիմնահարցերուն՝ ազգային համարկումին և համաշխարհայնացման գործընթացի մասնակցութեան բնոյթի ու ձևի ճշդման: Սփիւռքի արեւմտահայ ինքնու-

17.- Social construction:

թեան լուսարձակի տակ բերելը ունի ե՛լ վերլուծական իմաստով առարկայական ենթահող, ե՛լ այդ ենթահողին վրայ զարգացող ծրագրային հեռանկար:

Այսպէս, եթէ նկատի ունենանք Հայաստանէն դուրս ապրող հայկական համայնքներու կազմակերպական կառոյցը, որուն թերևս ամենէն ցայտուն օրինակը Զալիֆօրնիան է, հիմնականօրէն Լոս Անճելըսը, պիտի տեսնենք համախմբուածութեան վայրերու հիմնական տարբերում՝ արևմտահայ սերունդներու, պարսկահայերու, պոլսահայերու և արևելահայերու միջև: Գաղափարախօսական ազդակը կը դիրացնէ մերձեցումը բնականաբար, բայց մշակութային իւրայատկութիւնները չի վերացներ: Իրողութիւն է, նաև որ վաթսունական թուականներէն սկսեալ, բայց մանաւանդ Հայաստանի անկախացումէն յետոյ, հայրենիքէն դուրս ելած հայութեան զանգուածը չմերուեցաւ ցարդ գոյութիւն ունեցող, այսպէս կոչուած «աւանդական» Սփիւռքին հետ, հեռու մնաց հաստատութիւններու մէջ համայնքային համախումբ կեանքէն և ստեղծեց իր կառոյցները: Երևոյթը, բնականաբար, աւելի խոր ուսումնասիրութեան կը կարօտի, սակայն անոր հիմնական պատճառը՝ հայրենիքէ դուրս կազմաւորուող ազգային հաւաքական կեանքի երկու տարբեր հոլովոյթներն են: Սփիւռքը արդիւնք է Աղէտի, վերապրումի ճիգ է իր եութեամբ և փիլիսոփայականօրէն դիտուած՝ շարունակուող գոյութեանական տագնապ, մինչ Հայաստանէն արտագաղթը հիմնականօրէն տնտեսական դրդապատճառ ունի, կամայական որոշում է և ոչ թէ բռնի ուժի պարտադրանք: Պարզ է, որ այս պայմաններուն մէջ երկու հաւաքականութիւններու հոգեմըտաւոր աշխարհն ու զարգացման հեռանկարները տարբեր պիտի ըլլան:

Պետք է աւելցնել իրողական երկու փաստ ևս: Առաջին՝ Սփիւռքը կը սահմանուի որպէս ան-պետական¹⁸ հասարակութիւն, և որպէս այդպիսին իր ազգային քաղա-

18.- Stateless:

քական ծրագիրը կազմաւորուած է իւրայատուկ ոլորտի մը մէջ, անկախ, բնականօրէն՝ իմա՝ հայրենի հողին վրայ զարգացող, քաղաքական գործընթացէն:¹⁹ Հայաստանէն արտագաղթածները, ընդհակառակը, քաղաքացիներ են և որպէս այդպիսին սահմանադրականօրէն կրնան մասնակցիլ Հայաստանի քաղաքական հոլովոյթին՝ ընտրական գործընթաց ըլլայ այդ թէ այլ: Երկրորդ՝ Սփիւռքի տնտեսական կապն ալ Հայաստանի հետ արհեստականօրէն ստեղծուած է, քիչ մը հետևանք, ինչպէս նշուեցաւ, հայրենադարձութիւնը հայրենիքի նիւթական օգնութեամբ փոխարինելու իրողութեան, և որպէս այդպիսին պատահական է և ոչ թէ ծրագրային ու շարունակական: Հայաստանէն արտագաղթը, որուն հիմնական դրոյապատճառը տնտեսական է, այսօր արդէն վերածուած է ֆինանսական գործօնի Հայաստանի տնտեսական զարգացման մէջ՝ որպէս հետևանք արտագաղթածներու իրենց հարազատներուն ուղարկած դրամին:²⁰ Հայաստանէն արտագաղթը, ուրեմն, ուղղակի կապ ունի հայրենի տնտեսական հոլովոյթին հետ ինչ ալ ըլլայ հարազատներու դրամ ուղարկելու անդրադարձը զարգացման, աղքատութեան նուազեցման կամ հարստութեան վերաբաժանման հեռանկարներուն համար:

Ինչ կը վերաբերի Սփիւռքը արևմտահայութեան հետ նոյնացնելու ծրագրային հեռանկարին, անոր հիմնաւորումը աւելի քան պարզ է. այսօրուայ պայմաններուն մէջ միայն Սփիւռքը կրնայ պահել ու զարգացնել արևմտահայ մշակոյթը:

19.- Խաչիկ Թէլէտլեան Սփիւռքի յատուկ քաղաքականացումը կը բանաձևէ որպէս անպետական հզօրանք -Stateless Power:

20.- Brian Roberts and King Banaian, «Remittances in Armenia: Size, Impact and Measures to Enhance Their Contribution to Development», paper submitted to the Third International Conference on Armenia, Washington DC, January 15-16, 2005:

Բաղդատական իմաստով, Հայաստանն արտագաղթը ամեն իմաստով նման է Լատին Ամերիկային Միացեալ Նահանգներ կատարուող տնտեսական արտագաղթին, որ կրնայ որպէս բնորոշ ծառայել կանխատեսելու համար արևելահայ համայնքներու կազմակերպական հետագայ զարգացումներու կարելիութիւնները: Սփիւռքը որպէս հաւաքական կազմակերպական ձև և մշակութային երեկոյթ *փարատիկմային* օրինակ է համաշխարհայնացման՝ որպէս տարրասեռում:²¹

2- Սփիւռքի գեղեցիկ խճանկարը (մոզայիք)

Երբ Սփիւռքը կը սահմանենք որպէս արևմտահայութիւն, նկատի ունինք անոր ծննդոցն ու մշակութային ժառանգը: Այլապէս, բառին տարրական իմաստով արեւմըտահայութիւն չէ մնացած: Սփիւռքը այսօր լիբանահայութիւնն է, սուրիահայութիւնն է, յունահայութիւնն է, ֆրանսահայութիւնն է... մէկ խօսքով՝ տարբեր երկիրներ հաստատուած և արդէն իւրայատուկ ինքնութիւն կազմած համայնքներն են: Ոչ միայն անհնար է մտածել մշա-

21.- Անարդար է առանձին տեղ չտալ հայրենիքէն դուրս ապրող առնուազն երկու իւրայատուկ հայկական հաւաքականութիւններու, որոնք իրանահայերն ու պոլսահայութիւնն են: Անկասկած որ անոնցմէ իւրաքանչիւրը ա՛յս փորձագրութեան սահմաններէն շատ անէլի լայն ուսումնասիրութիւն պահանջող երևոյթներ են: Սփիւռքի և Հայաստանէն արտագաղթի բաղդատականին վրայ շեշտը դնելը ոչ միայն երկու հաւաքականութիւններու կազմաւորման ու հեռանկարային տարբերութիւնները լուսարձակի տակ առնել կը նպատակադրէ, այլ նաև ուշադրութիւն հրաւիրել «սփիւռք» յղացքի քիչ մը դիւրին, այդուհանդերձ շուարեցնող գործածութեան վրայ: Փոխանակ «իին», «աւանդական», «նոր» և այլ ածականներով բառի գործածութեան վրայ պնդել, յստակութեան համար նախընտրելի է պարզապէս Աղէտի հետևանքով վերապրող արեւմըտահայութեան հայրենիքէն դուրս կազմակերպուած համայնքները բնութագրել որպէս Սփիւռք, և Հայաստանէն արտագաղթը կոչել իր անունով՝ գաղթականութիւն, ինչպէս այլ ժողովուրդներու պարագան է:

կութային միատարրութեան ու անոր տարբեր գործնականացումներու -օրինակի համար հայերէնի ուսուցման ծրագիրներ- մասին, այլև իսկ նման նախանձախնդրութիւն կրնայ նուազեցնել Սփիւռքի զարգացման հիմնական առաւելութիւններէն մէկը, որ իր բազմազանութիւնն է: Ընդհակառակը, Սփիւռքը գեղեցիկ է իր խճանկարային իրականութեամբ, որ կը պահպանուի միայն եթէ իւրաքանչիւր համայնք իր զարգացման հոլովոյթն ու իւրայատկութիւնները կարենայ պահպանել ու մշակել: Մշակութային այս բազմազանութիւնը, ինչպէս Հայլթըր կը վերլուծէ, զուտ *մարքեթինկ*-ի իմաստով մեծ առաւելութիւններ կու տայ զայն ներկայացնելու ատակութիւնը ունեցողներուն:²²

Կայ երկրորդ հիմնապատճառ մը Սփիւռքի խճանկարը պահելու համար, և այդ հիմնապատճառը՝ ժողովրդավարութեան էթիկան է: Նիւթը առանձին քննարկումի կը կարօտի եթէ փորձենք թէկուզ և նուազագոյն սահմանում մը տալ յղացքին և տեսնել թէ այն ինչպէ՛ս կը գործնականանայ Սփիւռքի անպետականութեան պայմաններուն մէջ: Հիմնականօրէն, սակայն, ժողովրդավարութեան էթիկան հայ ըլլալու ձևերուն բազմազանութիւնը պահպանելու սկզբունք մըն է: Բնականաբար, ոչ ոք կրնայ պարտադրել միատեսակ հայու տիպար մը, բայց ի բացակայութիւն ժողովրդավարութեան էթիկայի, ազգային ինքնութեան էթնիկական և ոչ թէ քաղաքացիական հասկացողութիւնն է որ կը գերակայէ որպէս մտայնութիւն, ամենօրեայ խնդիրներու լուծումներ բերելու կոչուած ուղեցոյց: Դարձեալ՝ պէտք է անելի խորացնել ազգային ինքնութեան էթնիկ կամ քաղաքացիական բնութագրումին իմաստը Սփիւռքի անպետականութեան պայմաններուն մէջ, երբ նշեալ տեսութիւնը կազմուած է նկատի ունենալով մասնաւորաբար ազգ-պետութիւններու կազմաւորման պարագաներ: Սակայն պէտք չէ

22.- Marilyn Halter, *Shopping for Identity: The Marketing of Ethnicity*, New York: Schocken Books, 2000:

մտահանել, որ Սփիւռքի հանգրուականականութեան հասկացողութեան բաղկացուցիչ մէկ տարրն էր ազգի արդի իտեալի -մշակութապէս համատարր հաւաքականութիւն, աշխարհագրական տուեալ տարածքի վրայ բնակող և գերիշխան պետութիւն ունեցող- պահպանումը:

Բազմազանութիւնը և ժողովրդավարութեան եթիկան ուղի կը հարթեն ազգային ինքնութեան քաղաքացիական բնոյթով բանաձևման նախաձեռնութիւններու, որոնք ի տարբերութիւն ազգային ինքնութեան էթնիկական բնոյթի հասկացողութեան հիման վրայ կազմակերպուած համայնքային ծրագիրներուն, ներքաշողական²³ յատկութիւն մը կու տան Սփիւռքին և կը փարատեն վանողական նեղմտութիւնները, որոնք այնքան լարուածութիւն կը ստեղծեն ոչ միայն ներհամայնքային կեանքին մէջ, այլ նոյնիսկ միջ-համայնքային յարաբերութիւններու ընթացքին: Հայ ըլլալու բազմազանութեան ընդունումը չի նշանակեր որ ամէն ինչ թոյլատրելի է, որ չկան կամ պետք չէ ըլլան չափանիշեր: Պարզապէս՝ պետք է այդ չափանիշերու ճշման գործընթացին տալ անելի հանդուրժողական, բանավէճի ու քննարկումի առիթ տուող մօտեցում, որ դուռ կը բանայ «տարրասեռումի քաղաքականութեան»:

Խորքին մէջ, Սփիւռքը առարկայականօրէն ըլլալով տարրասեռումի հոլովոյթ, երբեք չէ յաջողած համայնքներու ազգային ինքնութեան գիտակցութիւնը գործնակասօրէն դնել ազգի էթնիկ հասկացողութեան հիմքերուն վրայ: Հայերէն չխօսողին, իր զաւակները հայկական վարժարան չուղարկողին կամ հայու հետ չամուսնացողին դատապարտումը արգելք չէ հանդիսացած որ այդ բոլոր երևոյթներն ալ իրականութիւն դառնան: Մերժել տարրասեռումի առարկայականութիւնը կը նշանակէ շարունակել մտաւոր արտադրութիւնը խմբագրականներու, գրական կտորներու, ժողովրդական երգերու և նման արտադրութիւններու, որոնք ազգի էթնիկական բիրեղու-

23.- Inclusionary:

թեան փաթոսը կը վերարտադրեն և կը յանգին գործնական կաշկանդումներու: Սփիւռքը հասկնալ որպէս խճանդկար կը յանգեցնէ տարրաստեումը վերածել գիտակցուած քաղաքականութեան և զայն ի սպաս դնել զարգացման:

3- Աշխատանքային բաժանում

Մինչև ութսունական թուականներու վերջաւորութեան կը տիրապետէր Սփիւռքեան կառոյցի կեդրոն-ծայրամաս պատկերացում մը, որուն համաձայն «կեդրոնը» կը բաղկացնէին հայրենամերձ միջին-արևելեան համայնքները, մինչ «ծայրամասը» կը կազմէին մնացեալ բոլոր շրջանները: Ոչ-պատահականօրէն անշուշտ, այս պատկերացումը տիրապետող եղաւ յատկապէս վաթսունական թուականներէն սկսեալ, երբ միջին-արևելեան համայնքները նոր կենսունակութիւն ապրելու սկսան: Այս պատկերացումը նաև համապատասխան էր Սփիւռքի հանգրուականակութեան հասկացողութեան: «Կեդրոնը» այս իմաստով միայն աշխարհագրական բնութագրում չունէր, այլ նաև քաղաքական իմաստ. Միջին Արևելքի համայնքներն էին որ ամենէն նպաստաւոր պայմաններուն մէջ կը գտնուէին հայապահպանման առաքելութիւնը լաւագոյնս առաջ տանելու մինչև հայրենադարձութիւն: Ազգային զարգացման հեռանկարը, ուրեմն, կ'ենթադրէր տեղաշարժ «ծայրամաս»էն «կեդրոն» և հոնկէ ալ՝ վերջնական հանգրուան հայրենիք:

Պատմական իրադարձութիւնները, բնականաբար, տարբեր իրողութեան տարին: Նախքան Հայաստանէն արտագաղթը, սփիւռքեան տեղաշարժը եղաւ «կեդրոն»էն «ծայրամաս»: Ինչ ալ ըլլան մանրամասնութիւնները, այս տեղաշարժը, միշտ յարգելով բացառութիւնները, ունէր մէկ հիմնական խթան կամ շարժառիթ՝ աւելի ապահով կեցութիւն: Իր եութեամբ բնականօրէն նիւթական այս շարժառիթով ցարդ միջին արևելեան «կեդրոն»ով ծանօթ Սփիւռքի այս բառացիօրէն արևմտականացումը սակայն, արգելք չհանդիսացաւ որ Միջին Արե-

ւելք «կեդրոն»ին հայ ըլլալու չափանիշերը շարունակեն տիրապետել մտածելակերպերու ու աշխատելաոճերուն վրայ, որովհետև, փաստօրէն, սփիւռքեան զարգացման առկայ պատկերացումին մէջ Միջին Արևելքին կը պատկանէր հայապահպանման ու հայրենադարձութեան առաքելութեանց յառաջապահի դերը: Զոսկէ է և՛ առաւելաբար Արևմուտքի հայ համայնքներու եօթանասունական և ութսունական թուականներու աշխուժացման պատճառը Միջին Արևելքէն եղած տեղաշարժին կապելու տարածուած կարծիքը:

Առանց բնականաբար, ժխտելու միջին արևելեան տեղաշարժին խոր ազդեցութիւնը Արևմուտքի համայնքներու վերջին երեք տասնամեակներու զարգացման հոլովոյթին վրայ, այսօր վերլուծական իմաստով աւելի յստակ է այդ համայնքներու աշխուժացումը տեղադրել տարրասեռումի ընդհանուր հոլովոյթին մէջ, քան անոր հիմնապատճառ նկատել միջին արևելեան տեղաշարժը: Այլապէս դժուար բացատրելի պիտի ըլլայ ութսունական թուականներուն Զարաի, իմա՛ Զարաւային Ամերիկա, համայնքներու աշխուժացումը առանց որ մասնաւորաբար կարևոր մարդուժի իմաստով ներդրում ըլլայ Միջին Արևելքէն: Այլ խօսքով, Սփիւռքը, աւելի ճիշդը իւրաքանչիւր համայնք, ունի ներքին զարգացման տրամաբանութիւն մը, որ աւելի հիմնական է քան արտաքին ազդակին ազդեցութիւնը՝ զարգացման ուղիի ճշդման իմաստով:

Իւրաքանչիւր համայնքի ներքին տրամաբանութեան գիտակցումը այսօր, 21րդ դարու շեմին, աւելի ևս կը կարևորուի՝ համաշխարհայնացման հոլովոյթին Սփիւռքի մասնակցութեան ճշդումի իմաստով: Միայն կեդրոն-ծայրամաս մտապատկերացման վերացումը կրնայ բացայայտել Սփիւռքի գլոբալութիւնը և անոր կարելորութիւնը հայութեան ընդհանուր զարգացման հեռանկարով: Զանի որ համաշխարհայնացումը իր սահմանումով իսկ կը ներառէ մարդկութիւնը ամբողջ, չկայ շրջան կամ համայնք, որ չկարենայ իր տեղն ու դերը ճշդել

այդ հոլովոյթին մէջ: Այս բնական աշխատանքային բա-
ժանում մըն է, որ կը կատարուի արդէն: Սփիւռքի մէջ աշ-
խատանքային բաժանումը, այս իմաստով, պէտք չէ հա-
ւասարեցնել համայնքներու դերակատարութեան գումար-
ումին: Աւելի շուտ կը նշանակէ՝ համաշխարհայնացման
հոլովոյթին մէջ բանալի դաշտերու ճշդում և անոնց թե-
լադրածին հետևումով իւրաքանչիւր համայնքի ռազմա-
վարական դիրքորոշում: Համաշխարհայնացման մաս-
նակցութիւնը նաև սորվելու հետևողական հոլովոյթ մըն է,
որուն գիտակցուած զարգացումը կը յանգեցնէ «գիտա-
կան համայնքներ»ու²⁴ -հիմնականին մէջ՝ Սփիւռքի մտա-
ւոր ու յանձնառու ուժը- ցանցի առաջացման: Սփիւռքի
պարագային, նման ցանցերու հեռանկարը առանձին ազ-
գային համարկումի գործօսի կրնայ վերածուիլ:

4- «Կեանքը այլ տեղ է»

Զեյի գրող Միլան Զունտերայի համանուն վեպին
այս խորագիրը Փարիզի Մայիս 1968ի իրադարձութիւն-
ներուն ընթացքին պատի մը վրայ գրուած կարգախօս
մըն է: Չայն գործածելով սփիւռքեան իրավիճակի պարագային,
պէտք է նկատի ունենալ համայնքներէն ներս ան-
հատի զարգացման կարելիութիւններու ու կարողակա-
նութեանց սպառումը, որ ինքնին Սփիւռքի տազնապն է
որ կ'արտացոլէ: Մինչ համայնքային կեանքն ու անոր
մասնակցիլը Սփիւռքի կազմաւորման տարիներուն
անհրաժեշտ պայման էր կեանքի մէջ յաջողելու, որովհե-
տև իր շրջապատին օտար հայը պէտք ուներ իր ազգա-
կիցներու աջակցութեան ինքզինք տեղաւորելու համար
նոր միջավայրի մը մէջ, այս ապահովութեան ազդակը
արժեզրկուելու սկսաւ անմիջապէս որ Սփիւռքը արդէն
կայացած իրողութիւն դարձաւ, հաւանաբար վաթսունա-
կանան թուականներու սկզբնաւորութեան: Տնտեսական
բարեկեցութիւնը տակաւին երեսունամեակ մը գրեթէ շա-

24.- Epistemic communities:

րունակեց պահպանել համայնքային հաստատություններու ընձեռած ապահովությունը համախումբ պահելու համար հայ անհատները, սակայն Հայաստանի անկախացումէն ի վեր հետզհետէ աւելի սրող ֆինանսական տագնապը արդէն չէզոքացուցած է հաստատություններու տուած ապահով զարգացման երաշխիքը:

Բնականաբար, երբ հաստատությունները անհատներու ե՛լ նիւթական ե՛լ այլ զարգացման կարելիութիւններ կ'ընձեռեն, աւելի քաշողական են: Նման պայմաններու մէջ, համայնքային կեանքին մասնակցութեան շարժառիթը միայն «յանձնառութիւնը» չէ, այնպէս ինչպէս ընթացիկ ճարտասանութիւնը կը շարունակէ յանկերգել: Կայ բնական լայն իմաստով «շահագրգռութիւն» մը, որ կը մղէ համախմբումի: Նման պայմաններու մէջ, նաև, հաստատություններու մէջ ղեկավար դիրքերու հասնիլը քաշողական է: Միևնոյն ժամանակ, սակայն, աւելի է ղեկավար դիրքերու շահագործման փորձութիւնը: Նաև՝ համայնքային կեանքի մասնակցութիւնը «պայմանաւորելու» հայ ըլլալու որոշ չափանիշերով, հայու տիպարի որոշ համակարգով մը, որ անհատներու ընկերականացման²⁵ կը ծառայէ: Այս տեսանկիւնէն, Սփիւռքը ունի ոչ-պաշտօնական «պատմութիւն» մը, որ դեռևս քառասունական թուականներէն իրենց ըմբոստութեան հետեւանքով համայնքներէն «արտաքսուած» խմբաւորումներու պատմութիւնն է:

Բարեկեցիկ ու աշխոյժ համայնքներու ժամանակաշրջանը, որ յաճախ մեկամաղձոտ *նոսթալժիայով* կը յիշուի, խորքին մէջ ունէր իր ժխտական երեսը, որ համայնքներու էապէս պահպանողական բնագոյին հետեւումով կը մերժէր նորութիւնը, հայ ըլլալու տիպարին ոչ-դասական չափանիշերը և նոյնիսկ յանձնառութիւնը -քաղաքական, ընկերային, մշակութային թէ այլ- որ խախտէր համայնքային հաստատություններու կեանքին անդորրու-

25.- Socialization:

թիւնը: Փաստօրէն, համայնքային հաստատութիւններու ղեկավարութեան ամէն սերնդափոխութիւն ունի իր պայքարի ու ներքին պառակտումներու երեսը:

Բնականաբար, այն անհատները, որոնք իրենց անհատական զարգացման համար համայնքային իրականութիւնը սահմանափակ կը գտնէին, հեռացան, յաճախ «հայութենէ կը հրաժարիմ» մը ստորագրելով: Միւս կողմէ, սակայն, մասնաւորաբար արւամտեան երկիրներու ժողովրդավար ընկերութիւններուն մէջ, համայնքային «դասական» հաստատութիւններու -եկեղեցի, դպրոց, ակումբ-կողքին, նոր բնոյթի հաստատութիւններ կը յառաջանան՝ բազմազանելով Սփիւռքի մէջ հայ ըլլալու յանձնառութեան այլընտրանքները: Ընթացիկ օրինակ մը կրնան ըլլալ ակադեմական շրջանակներու մէջ հայկական ամպիոններու շուրջ զարգացած համախմբումները: Այլ օրինակ մը կրնան ըլլալ ոչ-հայկական վարժարանները, ուր հայ ծագումով աշակերտներու պատկառելի թիւ մը կայ և որոնց տնօրէնութիւնները ընդամաջելով հայ աշակերտներու ծնողներուն, հայերէն լեզուի դասընթացքներ կը ստեղծեն: Ստեղծուած կացութիւնը հակասական է. մէկ կողմէ նոր հաստատութիւններու ու համախմբման ձեւերու յառաջացումը զարգացման հոմանիշ է, միւս կողմէ, սակայն, դասական կառոյցները կը դատարկուին:

Միշտ հետևելով սփիւռքեան հոլովոյթը տարրասեռումի գործընթաց դիտելու տրամաբանութեան, նման պայմաններու մէջ անհրաժեշտ կը դառնայ համայնքային դասական կառոյցներու վերածնաւորում: Նման նախանձախնդրութիւն կը հիմնուի համայնքային ցարդ ինքնամփոփ ու յարաբերաբար «փակ» կառոյցներու «բացում»ին վրայ՝ նորութիւններու ընկալման պատրաստակամութեան իմաստով: Աւելին, հոն ուր համայնքային դասական կառոյցները չեն համապատասխաներ հասարակական ու քաղաքական զարգացումներու հիմնական ընթացքին, անհրաժեշտաբար պէտք է անոնց վերադասաւորման մասին մտածել: Օրինակը մասնաւորաբար կու

տան եւրոպական երկիրներու հայ համայնքները, ուր նկատառելի ճիգ մը կայ քայլ պահելու շրջանային համարկումի հոլովոյթին հետ և մտածելու ու գործելու որպէս «Եւրոպահայ»: Հարց կը ծագի, անշուշտ, որ համայնքներու կազմակերպման աւելի լայն չափանիշ մը արդէ՞օք նպաստաւոր է երբ անխուսափելիօրէն այդ մէկը պիտի նշանակէ համախումբ կեանքի նուազ կեդրոնացեալ իրավիճակ: Խնդիրը հոս հոլովոյթի մը նպաստաւոր ըլլալը կամ չըլլալը չէ, որովհետև հոլովոյթը իր սահմանումով իսկ առարկայական իրադարձութիւն է: Անհնարին է հոլովոյթը կասեցնել: Հետևաբար մարտահրաւերը դարձեալ ամենէն բարենպաստ պայմաններուն մէջ անոր մասնակցութեան ձևերու փնտռտուքն է:

Համայնքներու վերդասաւորման այս նախանձախընդրութիւնը նաև կը ջրէ երկար ժամանակ *օպսեսիոն* դարձած համասփիւռքեան կառոյցի մը պատրանքը: Նման կառոյց, ինչպէս ցարդ տեղի ունեցած փորձերը ցոյց կու տան, ոչ միայն անկարելի է, այլ նոյնիսկ աննպաստ որպէս համաշխարհայնացման մասնակցութեան ռազմավարութիւն: Համաշխարհայնացման գործընթացը ինքնին կեդրոնախոյս հոլովոյթ է, այն իմաստով որ կարելի չէ զայն ղեկավարել կամ անոր վրայ հսկողութիւն բանեցնել մէկ կեդրոնէ: Հետևաբար, Սփիւռքի մասնակցութիւնը համաշխարհայնացման հոլովոյթին կրնայ ազդեցիկ ու բարենպաստ ըլլալ միայն նախապէս քննարկուած աշխատանքային բաժանումի և համայնքներու վերակառուցման նախաձեռնութիւններու միջոցաւ:

5- «Հիփերմոտեռն» հայը որպէս զարգացման ազդակ

Սփիւռքը զերծ չէ նաև մարդկային հասարակութեան մէջ տեղի ունեցած հիմնական փոփոխութենէ մը որ արմատապէս վերադասաւորած է անհատ-ընկերութիւն փոխ-յարաբերութիւնները: Համաձայն մտածողութեան այն ուղիին, որ ծանօթ է որպէս «հիփերմոտեռնիթէ»,²⁶ որ

26.- Hypermodernite:

ծնունդ առած է Ֆրանսայի մէջ և այսօր մեծ տարածում կը գտնէ աշխարհի մէջ, վաթսունական թուականներէն սկսեալ մարդ-անհատը հետզհետէ կը ձեռքագատի ընկերային կաշկանդումներէ և կը վերածուի իր սեփական կեանքի կեդրոնին: «Յիփերմոտեռն» անհատը, հետևաբար, իր կեանքը տնօրինելու կարող անհատներու ընկերային երևոյթն է: «Նախապէս, կը բացատրէ Ժան Զլօտ Զօֆմանն, ընկերային կառոյցներն էին, որ անհատները կը կրէին և անոր գործելու կարելիութիւն կը ստեղծէին: Այսօր, այդ մէկը կախում ունի անհատին ենթակայակաւութենէն, տրուած ըլլալով որ անհատը ինքն է որ պիտի կառուցէ այն պայմանները, որոնք իրեն թոյլ կու տան նախաձեռնել»:²⁷

Հասկնալի է, ուրեմն, որ հայ անհատներ Սփիւռքեան կառոյցներէն հեռանալու սկսան համամարդկային չափանիշով տեղի ունեցած այս հասարակական ու մշակութային տեղաշարժի սկսման թուականներուն: Այսօր, ենթակայականութիւնը վերածուած է արդիւնաւոր ու ստեղծագործական նախաձեռնութիւններու մղիչ ուժի, եթէ ոչ նախապայմանի: Կը բաւէ նշել Աթոմ Էկոյեանի *Արարատ* ժապաւենին կամ Փիթըր Պալաքեանի գիրքերուն առաջացուցած զօրաշարժը համասփիւռքեան մակարդակով, և անոնց անդրադարձը համաշխարհային տարողութեամբ: Անհատական յաջողութիւններու այս ազդակը, սակայն, ընկերային, իմա՝ սփիւռքեան զարգացման նպաստող, պաշտօն պիտի չունենայ, եթէ ենթակայականութեան ստեղծագործ ուժը իր տեղն ու կարելութիւնը չգտնէ սփիւռքեան հոլովոյթին մէջ: Կամ ալ՝ եթէ Սփիւռքը չօժտուի այնպիսի կառոյցներով, որոնք ստեղ-

27.- Jean Claude Kaufmann, «Devoir s'inventer» հարցազրոյց կատարուած Xavier Molenat-ի կողմէ Sciences Humaines n. 154, Novembre 2004: Ազատօրէն թարգմանուած ֆրանսերէն քննադիւնէն. «Avant, les structures sociales portaient l'individu et lui permettaient d'agir. Aujourd'hui, ça passe par la subjectivité de l'individu, qui doit construire les conditions qui lui permettent d'agir.»

ծեն այն միջավայրը ուր կը քաջալերուի ենթակայականութեան ստեղծագործ ուժը, կամ այն տարածութիւնը, ուր անհատական յաջողութիւնները դիտուին նաև որպէս ընկերային զարգացման նպաստող հիմնական ազդակ:

Իրարու հետ տրամաբանական կապ ունեցող ու գիրար ամբողջացնող այս հինգ խնդիրները կը միտին բնութագրել Սփիւռքի նոր օրակարգ մը: Նման նախանձախնդրութիւն հիմնուած է առարկայական հետևեալ տուեալին վրայ. քսանմէկերորդ դարուն, գլոբալ աշխարհի մը մէջ, Սփիւռքի վերասահմանումը կը պարտադրէ հայրենադարձութենէն տարբեր հորիզոն մը: Սփիւռքը ունի նոր առաքելութիւն մը, որուն էութիւնը կը կայանայ հայրենի հողէն դուրս ծնած հայորդիին, և թերևս նոյնիսկ ոչ-հայորդիին, հայկականութեան համամարդկային -հումանիտար- հարստութեան համոզումը տալ, և անոր հիմնաւորումով սահմանել ազգային ինքնութեան յանձնառութիւնը: Այդ ձևով միայն կարելի է հայկականութիւնը ոչ միայն պահել ու պահպանել, այլ նաև ու մանաւանդ՝ զարգացնել:

Սփիւռքը այլևս հայապահպանում չէ: Հայազարգացում պէտք է ըլլայ:

Մշակում հայերէնի լեզուամշակութային քաղաքականութեան որպէս հայութիւնը միաւորող կարեւոր ազդակ

Մկրտիչ Մկրտիչեան

Լեզուի մասին այս զեկուցումը մասնագետի մը, այսինքն՝ լեզուաբանի մը կողմէ չէ պատրաստուած: Այս հանգամանքը, կը կարծեմ, թերութիւն մը ըլլալէ աւելի՝ առաւելութիւն մըն է, քանի մեր ներկայ պայմաններուն մէջ մասնագետը անպայման կողմ է հայոց լեզուի այս կամ այն հարցի դիրքորոշման մէջ: Չարմանալիօրէն մասնագետը աւելի զգացական տեսանկիւնէ կը մօտենայ հարցերուն, մինչդեռ բնական է ակնկալել ճիշդ հակառակը: Սակայն այս՝ եւ առհասարակ ազգի միութիւնը խնդրոյ առարկայ դարձնող հարցերու քննութեան մէջ պարտադիր պէտք է ըլլան մանաւանդ առարկայականութիւնը, որպէսզի եզրակացութիւնները ըլլան ճիշդ եւ անոնցմէ բխող որոշումները ըլլան գործադրելի եւ օգտակար: Մեր ժամանակներուն, սակայն, լեզուական հարցի մասին առարկայական քննութեան պարագային կրնաս քու ունեցած սակաւաթիւ բարեկամները կորսնցնել. իսկ եթէ բանականութիւնդ գործածես, նոր բարեկամներ շահելու առիթն ալ կորսնցուցած կ'ըլլաս:

Ի՞նչ է լեզուն: Լեզուն, անշուշտ, գեղարուեստի ենթակայ է. բանաստեղծութիւն, գրականութիւն ընդհանրապէս, թատրոն, ճառախօսութիւն: Հիմնականին մէջ սակայն լեզուն հաղորդակցութեան միջոց է. կարծիք, գաղափար, մտածում, փափաք, սեր, ատելութիւն արտայայտելու՝ ուրիշին հասկնալի դառնալու գործիք է: Հաղորդակցութեան մէջ գոյութիւն ունին առնուազն երկու մասնակիցներ. հաղորդիչը եւ ընդունիչը, տուողը եւ ընկալու-

ղը, գրողը եւ ընթերցողը, խօսողը եւ մտիկ ընողը: Հետեւաբար լեզուն, իր բանաւոր եւ գրաւոր արտայայտութեան մէջ, անխուսափելիօրէն ձայնային ու գրաւոր պայմանական խորհրդանիշներու ամբողջութիւնն է. խորհրդանիշներ՝ որոնք նոյն նշանակութիւնը պէտք է ունենան բոլորին համար, որպէսզի կարելի ըլլայ խուսափիլ Քաբէլոնէն: Բնական է, մարդուն զարգացման հետ կը զարգանայ նաեւ լեզուն՝ արտայայտել կարենալու համար բոլոր նոր առարկայական, հոգեկան, իմացական վիճակները, ապրումները եւ առ հասարակ մտածումները: Նաեւ՝ հասարակաց պատմութեան, կրօնքի, ականդութիւններու, բարքերու եւ սովորութիւններու, հաստատութիւններու, պատկանելիութեան ենթակայական զգացումի կողքին՝ լեզուն ազգը յատկանշող հիմնական տարրերն է:

Իր զարգացման ընթացքին լեզուն յարաբերութեան մէջ մտնելով ուրիշ լեզուներու հետ, կը կրէ անոնց ազդեցութիւնը եւ իր կարգին կ'ազդէ անոնց վրայ: Այսպէս, հայերէնը հնդեւրոպական լեզուներու ընդհանուր ընտանիքին պատկանելով հանդերձ՝ մինչեւ ասկէ 1600 տարիներ առաջ հայ գիրերու գիւտը, ըստ Հրաչեայ Աճառեանի կրած է թրակերէնի, փոհւգերէնի, փոքրասիական այլ լեզուներու, խալդերէնի, միտաներէնի, ասորերէնի, իրանական լեզուներու, յունարէնի, լատիներէնի եւ եբրայերէնի ազդեցութիւնները:

Հինգերորդ դարու Մեսրոպեան հայերէնը գործածուած է մինչեւ 16րդ դարու կեսերը: «Լեզուները», կ'ըսէ Հ. Աճառեան, «ենթակայ են մշտական փոփոխութեան. այս շրջանի հայերէն լեզուն էլ ապագային պիտի կրէր այլեւայլ փոփոխութիւններ: Լեզուական յայտնի տարբերութիւններ տեսնում ենք այն հայերէնի միջեւ, որ Մեսրոպի, Սահակի եւ նրանց անմիջական աշակերտների մահից յետոյ գրի առնուեց»: Մեսրոպեան շրջանի հայերէնը խօսակցական լեզու էր. ժողովուրդի խօսած ու երգած լեզուն էր:

Յետոյ եկաւ յունաբան հայերէնը, ուր գրողները

սկսան հայերէնը արուեստականօրէն զարգացնել՝ յունարէնի օրինակին վրայ. յունարէնի հետեւումով յօրինուեցան նոր բառեր, այդ լեզուի օրինակով հարազատօրէն կազմուեցաւ քերականութիւնը: Ատկէ անմիջապէս ետք հայերէնը կրեց արաբերէնի ազդեցութիւնը, վրացերէնի ազդեցութիւնը: Դասական լեզուն (կամ հին հայերէնը) կամաց-կամաց փոխուեցաւ եւ վերածուեցաւ *միջին հայերէնի*, սակայն եկեղեցին շարունակեց հաւատարիմ մնալ գրաբարին. ժողովուրդը՝ լեզուի բնական զարգացումով եւ այլեւայլ օտար ազդեցութիւններու տակ կը գործածէր լեզու մը, որ ժամանակի ընթացքին հետզհետէ աւելի ու աւելի կը հեռանար գրական լեզուէն. գրական հայերէնի եւ գործածական հայերէնի միջեւ վիհը կը խորանար, մանաւանդ երբ հայերէնի վրայ սկսաւ գործել թրքերէնի ազդեցութիւնը: Գրական լեզուն ստացաւ գրաբար անունը, իսկ ժողովրդական լեզուն կը կոչուէր *գռեհիկ, մթին լեզու, գեղջուկ բան, ռամկօրէն, սովորական խօսք, աշխարհական խօսք՝ հակադրուած անշուշտ եկեղեցական խօսքին եւ, վերջապէս, աշխարհաբար*: Յստակ է. ինչ որ ժողովրդական էր եւ կապ չունէր վանական ազնուակա-նութեան հետ՝ արհամարհելի էր: Պարզ հաշիւով ուրեմն՝ հայոց լեզուի զարգացման ժամանակագրական կարգը գրաբարէն՝ միջին հայերէն եւ միջին հայերէնէն՝ աշխարհաբար է: Միջին հայերէնը կիլիկեան թագաւորութեան պաշտօնական լեզուն դարձաւ, բայց եկեղեցին շարունակեց գործածել գրաբարը: Շնորհիւ պետական լեզու դարձած ըլլալու իր հանգամանքին՝ միջին հայերէնը ծնունդ տուաւ հարուստ գրականութեան մը: Միջանկեալ ըսենք նաեւ, որ թրքախօս հայերը ծաւալեցին հայատառ թրքերէն գրականութիւն, իսկ ատեն մը թուրք մտաւորական-ներ լրջօրէն մտածեցին հայկական այբուբենը որդեգրելու մասին՝ փոխարինելու համար արաբական տառերը:

Գրաբարի գործածութեան շրջանին վստահաբար գոյութիւն ունէին բարբառներ. անոնց թիւը յաւելում արձանագրած էր միջին հայերէնի գործածութեան շրջանին:

Ասոր պատճառը անշուշտ Հայաստանի մասնատումն էր եւ համահայկական պետական լեզուի մը բացակայութիւնը: Գրական լեզուն սակայն մէկ էր թէ՛ գրաբարի շրջանին, թէ՛ միջին հայերէնի շրջանին: Որեւէ բարբառ չգործածուեցաւ լուրջ կերպով գրականութիւն ստեղծելու համար: Երկու շրջաններուն ալ հայ ազգը ունեցաւ մէկ գրական լեզու, մէկ պաշտօնական լեզու:

Դժբախտաբար նոյն ձեւի ճակատագիր չունեցաւ աշխարհաբարը: Հայաստանի բաժանման բազմատեսակութեան պատճառով ծնունդ առին իրարմէ բաւական տարբեր բարբառներ, արեւելեան ճիւղը կը պարփակեր Երեւանի, Թիֆլիսի, Ղարաբաղի, Շամախի, Պարսկահայոց եւ Աստրախանի, Ջուղայի եւ Ազուլիսի բարբառները. արեւմտեան ճիւղը կազմուած էր Կարինի, Մուշի, Խոտորչուրի, Վանի, Տիգրանակերտի, Խարբերդի եւ Երզնկայի, Շապին Գարահիսարի, Համշէնի, Մալաթիոյ, Կիլիկիոյ, Սուրիոյ, Արաբկիրի, Ակնի, Սեբաստիոյ, Թոքաթի, Ամասիոյ, Օրտուի, Իզմիրի, Նիկոմիտիոյ, Պոլսոյ, Ռոտոսթոյի, Խրիմի եւ Առտեալի բարբառներէն: Պոլսոյ բարբառը հասկնալի պատճառներով զարգացաւ՝ դառնալու համար այսօրուան արեւմտահայերէնը, իսկ Երեւանի բարբառը՝ պաշտօնական արեւելահայերէնը:

Իրենց զարգացման ընթացքին արեւմտահայերէնն ու արեւելահայերէնը ընթացան տարբեր ուղիներով՝ հակառակ հայութեան հիմնական երկու կարեւոր հատուածներու միջեւ գոյութիւն ունեցող կապերուն եւ հաղորդակցութեան: Արեւմտահայերէնը զարգացաւ աւելի կանուխ քան՝ արեւելահայերէնը, շնորհիւ Մխիթարեաններու յարատեւ ճիգերուն եւ պոլսահայ ուսանողութեան յառաջդիմական խանդավառութեան. լեզուն արագօրէն հարստացաւ գրաբարէն փոխառութիւններով եւ արիեստագիտական նոր եզրերու հայերէնի թարգմանութեամբ. կարելի չափով լեզուն զտուեցաւ օտար բառերէ, բայց լեզուի կառոյցը որոշ չափով ու բնականօրէն հետեւեցաւ ֆրանսերէնի՝ կամ առհասարակ ռոմանական լեզուներու կառոյ-

ցին. «ա լա ֆրանքա»ն օսմանեան քաղքենի հասարակութեան ազդեցիկ բնաբանն էր, որմէ գերծ չէր նաեւ հայ համայնքն ու իր լեզուն: Արեւելահայերէնը զարգացաւ ռուսերէնի ազդեցութեամբ եւ անոր միջոցաւ՝ յատկապէս գերմաներէնի ազդեցութեան տակ. գրաբարէն փոխառութիւնները եղան նուազ, իսկ օտար լեզուներէ փոխառութիւնները եղան աւելի առատ ու կատարուեցան առանց բարդոյթի: Ի դէպ՝ աշխարհաբարի տիրապետութեան շրջանին ալ եկեղեցին շարունակեց գործածել գրաբարը: Վերջերս միայն աշխարհաբարը սկսաւ մուտք գործել ծիսակատարութիւններէն ներս, երբ սփիւռքահայերու մէկ մասը բոլորովին մոռցած է հայերէնը. թէ՛ գրաբարը, թէ՛ աշխարհաբարը:

Հայերէնի երկու տարբերակներուն միջեւ բաղդատութիւն մը կատարած ըլլալու համար՝ կը մեջբերենք Լեւոն Հախվերտեանի խօսքը, որ կ'ըսէ.

«Թէեւ փոխադարձաբար հասկնալի, սակայն արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի միջեւ կան յստակ ու ակներեւ տարբերութիւններ: Լեզուաբաններուն կարծիքով՝ արեւմտահայերէնը գրաբարին մօտ է իր շարահիւսիւթեամբ, արեւելահայերէնը՝ արտասանութեամբ»:

«Արեւմտահայերէնը աւելի բարեհնչիւն է, աւելի նուրբ, բայց տեսակ մը գրքային, մինչ արեւելահայերէնը աւելի կոշտ է, բայց աւելի հողեղէն: Առաջինը աւելի աղէկ մշակուած է գեղեցկագիտօրէն, երկրորդը՝ գաղափարապէս».

Իսկ Հրաչեայ Աճառեան կ'ափսոսայ, հաստատելով՝

«Արեւելահայ գրական գործիչները կարող էին ընդունել արեւմտահայ գրական լեզուն, որ արդէն պատրաստ էր, եւ փոքր աշխատանքնով յարմարեցնել արեւելահայ ժողովուրդի լեզուական պահանջներին: Բայց այսպէս չէղաւ: Նրանք ստեղծեցին մի ուրիշ գրական լեզու, որի հիմքը Երեւանի բարբառն էր եւ որի հեղինակն է համարուում Մոսկուայի Լազարեան ճեմարանի ուսանողութիւնը»:

Արեւմտահայերէնի զարգացումը անշուշտ դանդա-

ղեցաւ Յեղասպանութենէն ետք, իսկ արեւելահայերէնի զարգացումը, ընդհակառակը, արագացաւ ու որակական ուստիւն արձանագրեց ստացած ըլլալով պետական լեզուի հանգամանք: Սփիւռքի մէջ կ'ապրինք ներկայիս արեւմտահայերէնի աղաւաղման ու բարբառացման գործընթացի ժամանակաշրջանին մէջ. ծնունդ կ'առնեն նոր յունաբան հայերէնը, ֆրանսաբան հայերէնը, ամերիկաբան հայերէնը, արաբաբան հայերէնը. բնական երեւոյթներ՝ որոնց ընթացքը գերմարդկային ճիգերով կարելի կ'ըլլայ դանդաղեցնել: Հայութիւնը մէկ է, բայց ունի լեզուական զոյգ ճիւղաւորում. առաջինը իր բնօրրանին մէջ տիրական կերպով զարգանալու բոլոր պատեհութիւնները ունեցող, միւսը՝ օտարութեան մէջ հիւժող ու այլափոխուող:

Երկուքի բաժնուեցաւ նաեւ ուղղագրութիւնը: Մինչեւ 1922 հայերէնի երկու ճիւղերը կը գործածէին նոյն ուղղագրութիւնը. այդ թուականին առնուեցաւ պետական որոշում՝ դասական ուղղագրութիւնը փոխարինելու Մանուկ Աբեղեանի առաջարկած ուղղագրութեամբ, որ շատ տարբեր էր դասականէն. այնքան տարբեր՝ որ նոյն իշխանութիւններու որոշումով 1940ին որդեգրուեցաւ Գուրգէն Սեւակի կողմէ բարեփոխուած ուղղագրութիւնը. այդ ուղղագրութիւնը կը կիրարկուի մինչեւ այսօր: Ուղղագրութեան փոփոխութիւնը մեծ յուզում յառաջացուց մտաւորական շրջանակներէն ներս, որոնք այս ինքնագլուխ քայլին մէջ տեսան հայութիւնը բաժնելու միտում, հակառակ անոր, որ ուղղագրութեան բարեփոխման մասին կը խօսուէր տասնամեակներէ ի վեր: Սակայն այդ փոփոխութիւնը կատարուած էր առանց նախապէս խորհրդակցելու շահագրգռուած բոլոր կողմերուն հետ, առանց յարգելու ժողովրդավարական նուազագոյն սկզբունքները. նոյնիսկ գիտակա՛նօրէն միակողմանի որոշում էր: Այսպէս՝ խորհրդային իշխանութիւններու հրովարտակով արուեստականօրէն յաւելեալ երկուութիւն մտցուեցաւ արդէն իսկ այլապէս բաժան-բաժան եղած հայ ժողովուրդի կեանքէն ներս: Ուղղագրութեան շուրջ բուռն վեճերը վերսկսան

Հայաստանի վերանկախացումն ենք, երբ դասական ուղղագրության ջատագովները առիթը յարմար նկատեցին հարցը անելի ազատ պայմաններու մեջ քննարկման ենթարկելու: Վեճը կը շարունակուի պարբերական բորբոքումներով:

Անշուշտ հայ ազգի մեկութիւնը հարցականի տակ չ'առնուիր որեւէ մեկու կողմէ, հակառակ գոյութիւն ունեցող տարբերութիւններուն, որոնք յառաջ եկած են քաղաքական, տնտեսական, քաղաքակրթական տարբեր միջավայրերուն մեջ հայութեան զանազան հատուածներու տարբեր կազմաւորման պատճառով. այս հաստատումը ժխտող լուսանցքային կարգ մը արտայատութիւններ պարագայական են ու ժամանակաւոր: Այդ տարբերութիւնները ունին իրենց պատմական պատճառները, իսկ ներկայ հանգրուանին, երբ հայութեան տարբեր հատուածներու միջեւ հաղորդակցութեան կարելիութիւնները բազմացած են, հայութիւնը ունի պատեհ առիթը ազգը յատկանշող տժգունած տարրերը կրկին աշխուժացնելու՝ զանոնք վերածելով լիարժէք յատկանիշներու: Ազգային պատկանելիութեան ենթակայական զգացումը եւ հասարակաց պատմութիւն ունենալու գիտակցութիւնը առկայ են. հասարակաց բարքեր ու սովորութիւններ, հասարակաց հաստատութիւններ վերստեղծելը ժամանակի հարց է միայն, այն պայմանով անշուշտ, որ հատուածներու միջեւ հաղորդակցութիւնը ըլլայ կանոնաւոր ու առօրեայ: Հիմնական ու հրամայական հարցը լեզուի խնդիրն է, որ կը հանդիսանայ այդ հաղորդակցութեան միջոցը եւ որմէ կախեալ է միւս տարբերութիւններու հարթումը:

Ո՞ր կը գտնուինք այսօր. որո՞նք են լեզուական գետնի վրայ հայութիւնը բաժնող ազդակները: Անոնք են՝
ա.- Երկու լեզուներու գոյութիւնը՝ կողք-կողքի:
բ.- Երկու ուղղագրութիւններու գործածութիւնը:
գ.- Համացանցային հաղորդակցութեան մարզէն ներս տիրող քառսը:

Արեւմտահայերէնը այսօր կը գործածուի արեւմըտ-

եան սփիւռքի մէջ, անոր գրականութիւնը որոշ չափով տեղ գտած է նաեւ Հայաստանի հայերէնի դասացուցակին վրայ: Սփիւռքի մէջ ան կ'ուսուցանուի հայկական վարժարաններէ ներս, իսկ սփիւռքահայ աշակերտութեան մեծամասնութեան համար արեւմտահայերէնը անհասանելի է: Անոր ճակատագիրը շատ փայլուն չէ: Հարցումի մը պատասխանելով՝ Կոստան Չարեան կ'ըսէ.

«Սփիւռքի գրականութեան հեռանկարները պետք է դիտել Սփիւռքի հեռանկարի լոյսին տակ: Իսկ այդպիսի հեռանկար, դժբախտաբար ես չեմ տեսնում:

Նոյն ճակատագիրն է վիճակուած նաեւ արեւմտահայերէնին: Պիտի մահանայ, եթէ շարունակի մաքառել այս պայմաններում: Մեծ ցաւ է, անշուշտ, ինձ համար այս բանը խոստովանելը, բայց այդպէս եմ տեսնում նրա հեռանկարը»:

Նոյնը կ'եզրակացնէ Հրաչեայ Աճառեան. «Արեւմտահայերէնը հարուստ է, բայց մեռնելու վրայ է»:

Արեւմտահայերէնին կամ ընդհանրապէս հայերէնին համար Սփիւռքի մէջ նախատեսութիւնները քաջալերական չըլլալով հանդերձ՝ Սփիւռքը կը մաքառի անբարենըպաստ պայմաններու մէջ: Լեւոն Շանթի նման մտաւորականներ իր ատենին գիտակցաբար լքեցին գրականութեան մշակումը, ամբողջութեամբ նուիրուելու համար հայերէնի ուսուցման գործին:

Արեւմտահայերէնի լեզուական մաքրութեան եւ հարստութեան մասին խոստովանութիւնները ընդհանրական են. ան Սփիւռքի մէջ կը տանի կենաց-մահու պայքար: Այդ պայքարը կը տարուի անհամակարգուած ու քառասային վիճակի մէջ. անհատներ իրենք իրենց տուած են լեզուի մաքրութիւնը պահպանելու առաքելութիւնը. անհատներ կը կատարեն նոր բառերու փնտմտուքը՝ ստեղծելով բառարանային քառու. անհատներ, առանց յաջողութեան անշուշտ, կը փորձեն պարտադրել իրենց «ճիշդ» քերականութիւնը: Բիւրեղացումը կ'ընթանայ որքան տարերային, նոյնքան՝ դանդաղ կերպով, մինչդեռ

բառն ու լեզուն իրենց սահմանումով իսկ միայն համախոհութեան արդիւնք կրնան ըլլալ: Բառի մը նշանակութիւնը սահմանում մըն է, սահմանում՝ որ բնականաբար գործածութեան ընթացքին կրնայ փոխուիլ կամ յաւելեալ նրբերանգներով հարստանալ: Բառի մը սահմանումը պէտք է ընդունելի ըլլայ ընդհանրութեան կամ անոր ներկայացուցիչներուն կողմէ: Բառակերտումը պետական գործ է, իսկ Սփիւռքը կառավարութիւն չունի եւ չի կրնար ունենալ. արեւմտահայերէնի միութիւնը պահպանողը գոյութիւն չունի:

Տարբեր է արեւելահայերէնի պարագան, որ 1918էն ի վեր պետական գործածութեան առարկայ է: Համալսարան ու ակադեմիա բառակերտումի հնոցներ եղած են տասնամեակներ շարունակ: Միաժամանակ, բռնատիրութեան շրջանին, անոնք պատասխանատուները հանդիսացան հայերէնէն ներս օտար բառերու բազմութեան մը արուեստական մուտքին. այս պարագան այնքան ալ մտահոգիչ պէտք չէ նկատել, քանի Աճառեանի բառերով՝ «ամէն մի լեզու, որ կեղծ է եւ անհատական քմահաճոյքի արդիւնք, ուշ թէ շուտ պիտի վերացուի»: Արուեստականօրէն ներմուծուող բառերը փոխարինելը այնքան ալ դժուար չէ, այնքան ատեն, որ հայերէն բառերը գոյութիւն ունին, կամ անոնց կերտումը կարելի է: Իսկ հայերէն լեզուի բառակերտման կարողականութիւնը կը մրցի միւս զարգացեալ լեզուներուն մեծամասնութեան հետ: Հայաստանի մէջ կը գործէ «լեզուի պետական տեսչութիւն»ը, որուն կից կը գործէ «հայերէնի բարձրագոյն խորհուրդ»ը, որ կազմուած է լեզուաբաններէ եւ այլ ճիւղերու մասնագետներէ: Տեսչութիւնը ունի երեք վարչութիւններ. լեզուական հսկողութեան, լեզուական ուսուցման եւ լեզուաշինութեան: Անտարակոյս, արեւելահայերէնի զարգացման գործընթացը անելի վերահսկելի է, քան արեւմտահայերէնինը:

Փշոտ հարց է մանաւանդ ուղղագրութեան հարցը, որ տեղի կու տայ կրքոտ վեճերու: Մեր կարծիքով այդ

ձեւի վեճերը կ'ուշացնեն այս հարցին շուրջ հաւանական համախոհութիւն մը ստեղծելու կարելի գործընթացները: Այս ուղղութեամբ Հայաստանի Հանրապետութեան լեզուի մասին օրէնքը քաջալերական է: Ան կ'ըսէ.

«Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական լեզուն հայերէնն է: Հայաստանի Հանրապետութիւնը նպաստում է հայերէնի ուղղագրութեան միասնականացմանը»:

Ոչ մէկ խօսք արեւելահայերէնի մասին, ոչ մէկ խօսք արեղեանական (աւելի ճիշդ՝ Գուրգեն Սեւակեանական) ուղղագրութեան մասին: Բոլոր կարելիութիւնները բաց են: Հարկաւոր է ձգտիլ համախոհութեան, որպէսզի լեզուն ըլլայ *մէկ*:

Հայոց լեզուի միութեան ձգտումի պատմութիւնը բարդ ու երկար է: 19րդ դարու վերջաւորութեան Մանուկ Աբեղեան կը գրէր.

«Մեզ նման ցրուած մի ազգի մէջ մի միակ գրական լեզու ունենալը անհրաժեշտ միջոց է ազգային միութեան համար: Եթէ այժմ մենք երկու գրական լեզու ունինք, այդ յատկապէս արեւելեան հայոց անցեալ գրագետների անհեռատեսութեան շնորհիւ է: Մեր արեւելեան գրական լեզուն արդի ձեւով իսկապէս գոյութիւն պիտի չ'ունենար, եթէ Նալպանտեան, Պատկանեան եւ ուրիշները, որոնք սկիզբ դրին այդ գրական լեզուին, աւելի ծանր մտածած լինէին իրենց գործի վրայ եւ հայութիւնը սահմաններից դուրս եւս տեսնէին»: Ան կը շարունակէ ըսելով, թէ լեզուական միութեան բացակայութեան՝ երկու լեզուները պետք է «այնչափ մօտեցնել, որ երկու կողմից եւս հասկանալի լինի»:

Սակայն նոյն Աբեղեանը արեւմտահայերէնին կ'ուզէ պարտադրել այնպիսի փոփոխութիւններ, որոնց հետեւանքով լեզուաբաններու շրջանակին մէջ բուռն վեճեր կը ծագին: Այս ուղղութեամբ Գրիգոր Վանցեան կը հակաճառէ.

«Աբեղեանի մեթոտի սխալն այն է, որ արեւմտեաններիս խրատ է տալիս այս կամ այն ձեւով մեզ մօտենա-

լու. անելի խելացի կը լիներ, եթէ նա մեզ խրատեր արեւմըտեանի այս կամ այն առաւելութիւնից օգտուելու»:

Ճիշդ մօտեցումը, կը կարծենք, Գրիգոր Վանցեանին է: Եթէ հետագայ հանգրուանի մը լեզուական միութեան հասնելու հարցին շուրջ համախոհութեան հասնելու տրամադրութիւն կայ, իւրաքանչիւր կողմը դիմացիին ընելիքը թելադրելու փոխարէն, ինքն իր ընելիքը պետք է սահմանէ:

Վերոյիշեալ վեճը տեղի կ'ունենար, երբ տակաւին արեւմտահայերէնը իր զարգացման բարձունքին վրայ էր: Այսօր տարբեր է կացութիւնը, սակայն Կոստան Չարեանի հետեւեալ խօսքերը կը մնան ի գօրու.

«Յայութիւնը մի է: Զի կարելի բաժան-բաժան անել ո'չ նրա ոգին, ո'չ նրա թափը եւ ո'չ այն հաւաքական ենթագիտակցականը, որ աղբիւրն է աղբիւրների եւ պատճառը պատճառների: Հայաստանը, մեր աստուածների ձեռքով կերտուած, աշխարհագրական բնորոշ միաւոր է, ինչպէս միաւոր է մեր ցեղը եւ մեր լեզուն: Հայ գրականութեան գերագոյն նպատակն է այս միութիւնը պահել եւ հասցնել իր բիւրեղացման վիճակին:

Ես հայութիւնը երեւակայում եմ իբրեւ մի:

Միասնական լեզուն պիտանի է ամբողջ հայութեան համար, որովհետեւ լեզուն պահպանում է ազգութիւնը:

Ես էլ եմ սկսել արեւմտահայերէնով, ապա անցել եմ արեւելահայերէնի: Իմ նպատակը չէ եղած այդ լեզուները միացնել, այլ՝ հարստացնել մէկը միւսով»:

Այսպէս է. լեզուական որեւէ փոփոխութիւն կարելի չէ արագ ու արուեստականօրէն պարտադրել, մանաւանդ ներկայի ազատ պայմաններուն մէջ: Նորի ստեղծումը կու գայ բնականաբար՝ հաղորդակցութեան միջոցով եւ բարեշրջումով: Օրէնքը պետք է պարզապէս արտօնէ յառաջատուական փոփոխութեան կարելիութիւնը, որ երկու լեզուներու փոխադարձ հարստացումով կրնայ ժամանակի ընթացքին առաջնորդել դէպի լեզուական միութիւն: Ճիշդ է Հ. Աճառեանի կարծիքը, թէ.

«Լեզուների մեջ մաքուր եւ աղաւաղեալ չկայ. բոլորն ալ յարատեւ փոփոխութեան, բարեշրջութեան ընթացքի մեջ են եւ պատմական անհրաժեշտութիւն է, որ նորերը փոխանակեն հիները»:

Մեր պարագային պատմական անհրաժեշտութիւն է *Նոր հայերէնի* կազմաւորումը, որուն վիճակուած է փոխարինել ներկայ արեւելահայերէնն ու արեւմտահայերէնը: Նոր հայերէնը՝ դասական հայերէնի՝ գրաբարի եւ միջին հայերէնի նման՝ համայն հայութեան հայերէնը:

Այդ լեզուի երկունքը սկսած է արդէն մեր աչքին առջեւ: Սփիւռքահայը նոյն լեզուն չի խօսիր այսօր, ինչ որ քսան տարիներ առաջ: Արտագաղթած նախկին հայրենաբնակ հայը նոր հայերէնի տարրեր կը ներմուծէ իր հայերէնի լեզուական քարտէսին վրայ: Հաղորդակցութիւնը անխուսափելիօրէն կը հարստացնէ եւ կը միաւորէ:

Լեզուական միութիւնը ներկայ պայմաններու մեջ բնականոն ընթացք համարելով՝ պետութեան կ'իյնայ այդ բնականոն գործընթացը հունաւորելու՝ անոր տալով համազգային նպատակաուղղուածութիւն:

Կը կարծենք, որ այդպիսի գործողութեան մը համար օգտակար կրնան ըլլալ հետեւեալ ձեռնարկները.

ա.- Արեւմտահայերէնի մասնագետներ՝ որոնց կարգին նաեւ սփիւռքահայեր, ներառել «լեզուի պետական տեսչութեան», եւ «հայերէնի բարձրագոյն խորհուրդ»ին մէջ, որպէսզի դիւրանայ երկու լեզուներու փոխ-հարստացումը:

բ.- Սփիւռքի մէջ եւս հրապարակել բարձրագոյն խորհուրդին կողմէ ընդունուած նոր բառերն ու կատարուած փոփոխութիւնները: Չանոնք փոխանցել նաեւ Սփիւռքի հայկական վարժարաններուն ու մամուլին:

գ.- Արեւմտահայերէնի մասնագետներով համալըրուած տեսչութիւնն ու բարձրագոյն խորհուրդը լուսարձակներէ հեռու պետք է քննէ ուղղագրութեան հարցը՝ առանց նախօրօք ճշդելու եզրակացութեան մը հասնելու պայմանաժամը:

դ.- Իբրեւ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի դանդաղ միախառնման քուրա Յայաստանի մէջ ստեղծել արեւմտահայ լեզուի ու գրականութեան ուսումնասիրութեան եւ ուսուցման յատուկ կառոյց՝ Նախընտրաբար պետական համալսարանի ծիրէն ներս: Այսպիսի ձեռնարկ մը պէտք է համարել անմիջական անհրաժեշտութիւն:

ե.- Վերջնականօրէն լուծել համացանցի վրայ հայերէն տառերու գործածութեան միօրինականացման հարցը, քանի դեռ ուշ չէ:

Լեզուական հարցին մէջ քաղաքական կամքի ձեւաւորումը կը կարօտի քաղաքական յանդուզն որոշումներու, քանի հարցը կը վերաբերի հայ ազգի վերամիաւորման: Ներկայ պայմաններով ստեղծուած բարենպաստ մթնոլորտը միշտ չէ, որ ընծայուած է հայութեան վերջին վեց դարերու ընթացքին: Այս առիթէն անպայման պէտք է օգտուիլ 19որդ դարուն գործուած սխալը ժամանակի ընթացքին սրբագրել կարենալու համար: